
Շատեր թոյլ կուստան որ մարին իրենց մէջ փափաքները, փառասիրութիւնները, Անոնք չեն հասկնար թէ փափաքին ուժզրշնութիւնն ու տեսականութիւնը անոր իրականանալուն պէտք եղած ոչքը կը հայթայթեն։

Ի՞նչ փոյթ թէ այս իրականացումը անհաւանական կամ հեռաւոր թուի, կամ ապագան մութ երեխ, բաւ է որ մենք զայն իրական տեսնենք, կը բաւէ որ ուժգնորդէն մաքառինք զայն ձեռք ձգելու համար, ուշ կամ կանուխ անիկա պիտի յայտնուի մեր կեանքին մէջ։ Բայց փափաք մը որ իրանալու ճիգով չընթանար, փառասիրութիւն մը որ կ'ընդհատուի, կը մարի առանց երբեք որ և է հետք ձգելու։

Յաճախ մենք է որ կ'աւելցնենք կամ կը պակսեցնենք մեր կարողութիւնները, մեր մտածումներուն, յոյզերուն և զաղափարականին որակովը։ Կարենայինք եթէ կատարեալ մարդեր նկատել զմեզ մեր երկնաւոր Հօրը նման, պիտի լցուեէինք ուժով մը որ աստուածացին է միայն։

Երբ մտածենք թէ մենք թշուառ ու անբախտ ծնած ենք, կը մնացանենք մեր մէջ յուսահատութեան և թշուառութեան

որդը, կը քանդակենք այն մութ պատկերը մեր մէջ, որ թշնամին է մեր խաղաղութեան, մեր երջանկութեան և յաջողութեան։ Վայրկեան մ'իսկ մի՛ փնտունիք թէ գուք հիւանդ էք և անկար, որովհետեւ անսնց վրայ մտածելով անոնց հեղինակութիւն կուտաք։ Մենք ամէնքս մեր մտածումներուն արտազրութիւններն ենք, մենք կ'ըլլանք ա՛յն ինչ որ մեր մտածումին մէջ ենք։

Եթէ այսինչ կամ այնինչ նպատակին մէջ յաջողիւ կ'ուզէք, ուզդեցէք ձեր մը տածումները դէպի այդ կէտը, ու ջանացէք զանոնք կարելի եղածին չափ լարաւած ու կենդանի պահել և յաջողութիւնը պիտի չուշանայ։ Այն ակար, անկար ու մեզաւոր մարդը, զոր մեր ապրելու սխալ կերպը ստեղծած է, աստիճանաբար պիտի փոխակերպարական մարդու, ստեղծուած Առաւելոյ կողմէ։

Վճռեցէք չունենալ որ և է զործ, ամէն մտածումի հետ կամ գործի որ ստորին է, ինչ որ գուք կը գործէք պարտի կրել կատարելութեան դրաշմը։

Մեծ բաներ իրագործելու այս յարատենողին և գիտակցութեան, այլակերպի աղդեցութիւնը մը կուտայ կեանքին, և զայն կը հանէ բարձր մակարդակի մը։

Մարդկային կեանքը այնպիս մը կազմուած է որ գլխաւորաբար յոյսով սնանի։ Հաւատքը առջե կը նայի ու կը նշմարէ բաներ զորս մեր մարմնի աչքը չի տեսներ։

Հաւատքը զոյտացութիւնն է այն բանիրուն զորս կը յուսանք, անոնց պատկերին ուրուազիրը, իրական հիւթը, և ոչ թէ մեր մտքի ներկայացումը լոկ։ Բան մը կայ հաւատքին, յոյսին ետին, մեր որտերու խորունկ իշերերուն ետին, մեր օրինաւոր փափաքներուն համաձայնող իրականութիւն մը։

Զեր բոլոր մտածումներու հոսանքը պէտք է ուղղուի դէպի այն նպատակակէտը՝ զոր նշանակած էք ձեր կեանքին իրագործման համար։ Բաղաքակրթութեան մէծ հըրաշքները արդիւնք են մտածումներու ինքնամփիման։ Ապրեցէք լաւագոյն բաներու սպասումին մէջ։ ապրեցէք այն համոզումով թէ ձեր ճիգերը և ձեր նպատակին հաննելու մաքառումը պիտի յառաջըրերէ ինչ որ մէծ է և գեղեցիկ։ Ապրեցէք այն համոզումով թէ գուք յարփանապէս

կը յառաջդիմէք միշտ մօտենալով լաւաց գոյնին, անոր որ բարի է, և թէ այս բարձրացումը կը կատարուի ձեր էւթեան մէն մի հիւլէին կողմէ:

Շատեր կը կարծեն թէ վտանգաւոր բան է իրենց երեակայութեան թերազդրած երազներուն յանձնուիլը, որովհեաւ այդ երազանքները կը ման զիրենք նուտզ զործնական մարդեր դարձնէլ. այսուհանդերձ երեակայութեան տուրքը մեր միւս կարողութիւններուն նման ուուրը է և Ան մեղի տրուած է աստուածային նպատակով մը, որպէսզի կարողանանք արկարի մը նետել դէպի անչօչափելի իրականութիւնները: Անիկա է որ մեղի կարողութիւնը կուտայ գաղափարականին մէջ ապրելու, նոյնիսկ այն պահերուն երբ մինք ստիպուած ըլլանք ապրի անհաճոյ ու անեղաստ չրջանակի մը մէջ:

Մեր երեակայութիւնը առիթ կուտայ մեղի ընդնշմարել այն փաստոր իրականութիւնները որոնք կը սպասեն մեղի: Ան կը յայտնէ ինչ որ կարելի է մեղի:

Օդին մէջ դղեակներ կառուցանելը պէտք չէ նկատել իրը անսգուտ և պնատակար ժամանեց մը, մենք դղեակներ կը ընենք նախ մեր ենթագիտակցութեանը մէջ, յետոյ անոնց մարմին մը կը հագցնենք մեր փափաքներուն մէջ, և ի զիրջոյ անոնք կը դառնան իրականութիւններ:

Երազելը միայն օդին մէջ զղեակներ չինելը չէ, ամէն իրական զղեակ, նախ կառուցուած է օդին մէջ: Օրինաւոր երազը ստեղծող է, ան կ'իրագործէ փափաքը և այն բանները զորս մենք կը փափաքինք և կը յուսանք: Շէնք մը չի կրնար կառուցուիլ առանց ճարտարապետի փլանին, անիկա պարտի նախ կառուցուիլ մաքին մէջ: Ճարտարապետը իր փլանին ընդմէջն կը տեսնէ կառուցուածքը այնպէս ինչպէս որ պիտի ըլլայ ան որ մը իր ամբողջ կատարելութեան և զեղեցկութեանը մէջ:

Ինչ որ մեր կեանքին մէջ կ'իրագործուի, մենք այդ ամէնը յլացած ենք արդէն տաեն մը մեր մտքին մէջ: Ինչպէս որ չէնքը իր ամբողջ մանրամասնութիւններով իրականութիւն մըն է ճարտարապետին մտքին մէջ, նախ քան իր քարերու կառոյցը, նմանապէս մենք նախ միտքով կը ստեղծենք այն բոլորը՝ որոնք ապափային

պիտի իրականանան մեր գործերուն մէջ: Մեր տեսիլները, մեր կեանքին կարելի կառուցուածքին փլաներն են. բայց անոնք փլաններ պիտի մնան, եթէ մենք հուժկու միգ մը չընենք զանոնք իրականութիւններու վերածելու:

Բոլոր անոնք որոնք մեծ գործեր ըրած են, ամէնքն ալ նախ երազողներ են եղած. և ինչ որ անոնք ըրած են, համեմատական եղած է իրենց երազները իրականութեան վերածելու ճիզին:

Մի՛ լքէք ձեր երազները, որավէտու ըստ երեսյթին անոնք անիրատկանալի են: Կապուեցէք ձեր տեսիլքներուն այնքան ամուր որքան կարող էք: Մի՛ թոյլատրէք որ կեանքի նիւթական կողմը քուզարէք ձեր գաղափարականը, կամ զայն նուազեցնէ: Ապրեցէք այնպիսի մթնոլորտի մը մէջ, որ ձեր թոյլէքները միշտ աշխոյժ պահէ: Կարդացէք այն զբքերը՝ որոնք կը խթանին ան ձեր թոյլէքները և կապուեցէք այն մարգերուն հետ որոնք իրագործած են ինչ որ զուք կը ջանաք ընել և փնտուեցէք առանց յաջողութեան զաղտնիքը:

Զեր գաղափարականին հետ յարատե այս սեեռումը պիտի ըլլայ մտքի շաղախ մը, և շօշափելի ձեւ մը պիտի տայ ձեր երազին:

Գիշերը քնանալէ առաջ, վայրկեան մը ինքնամիտոփուեցէք: Հանդարտ մը նըստեցէք պահ մը և խոկացէք ձեր սրտին լիութեանը վրայու Մի՛ վախնաք ձեր արդ ընզանակութեանը վրայ, «որովհետեւ առանց երազի ազգերը կը կորսուին»: Երազելուն կարողութիւնը ի զուք տեղը չէ տրուած ձեղի, անոր ետեւ իրականութիւն մը կայ. անիկա աստուածային մէկ չնորհն է, սահմանուած ձեղի նշմարել տալու այն մեծ բանները՝ որոնք ձեղի վերապահուած են, տեսաններին անտեսանելիին բարձրանալու, նիւթական պայմաններէն իսէւալ պայմաններու ելլելու, և ձեղի ցուցնելու թէ այս բանները ձեր կեանքին մէջ իրականութիւններ պիտի դառնան: Դէպի դրախտ ուղղուած աչքի այս ակնարկները մեղի տրուած են արգիլելու յուսահատիլը մեր թերութիւններէն և ձախաւերութիւններէն:

Խօսք չեմ ըներ անցողակի և ուրուացնոր երազներուն, այլ հոգիին օրինաւոր փափաքներուն, իրական ու նուիրական, որոնք կեանքի ընթացքին շարունակ

կը լիւեցնեն թէ մենք կրնանք մեր կեանքը գտնմացնել, և թէ ի հեճուկս մեր անհաճոյ կամ թշնամի միջավայրին, մենք կրնանք զմեղ բարձրացնել մինչև այն գազափառական վիճակը, զոր կ'ընդնշմարենք մեր երազներուն մէջէն:

Օրինաւոր այս թոփչքները աստուածային ծագում ունին: Այսկերպ մտածելով չեմ ակնարկեր բոլոր այն բաներուն՝ զորս չունինք բայց կը փափաքինք ունենալ, և որոնք դառն պտուցներու կը փոխուին երը անոնց տէր ըլլանք, այլ այն օրինաւոր փափաքներուն է խօսքս, որոնք կեանքը իր աստուածային նպատակին կը տանին: Թըրջահաւատք մը պիտի մայ քրջահաւատք այնքան ատեն, որքան քրջահաւատք մը իտէլը ունենայ: Մեր մտային կեցուածքը, մեր որտերուն խօրունկ փափաքը կը կազմեն անվերջահաւատք ազօթքը որուն կը պատասխանէ ննութիւնը: Ան իրքն ստացուածք կը նկատէ այն ինչ որ մենք կը փափաքինք, այն ինչ որ մեր սրտերը կը պահանջին, այն բանը զոր կը փնտանք և որուն պէտք ունինք: և ան (բնութիւնը) կ'օգնէ զայն ձեռք ձգելու մեր այս զորձին մէջ: Քիչ մարդիկ կը հասկընան թէ իրենց փափաքներն են իրենց իրական ազօթքները, ոչ թէ իրենց մրմբնաջածները, այլ անոնք որոնք իրենց սրտերէն կը բջիսին և որ միայն ընգունելի են:

Անազին ոյժ մը կայ՝ մեծապէս ստեղծագործ, որ յառաջ կուգայ փափաքի մը կամ փառասիրութեան մը վրայ մեր մտածումը կեզրոնացումէն: Այս կեզրոնացումը կը զարգացնէ հրաշալի կարողութիւնը՝ ստեղծելու բաներ որոնց համար կը հառաչինք:

Մեր սրտերուն թոփչքները կը ներշնչին մեր ստեղծագործ խանզը, և անոր կը պարտազրեն այն բաները զորս կը փափաքինք: Անոնք յաւիտենական կորովատու զեղեր են մեր կարողութիւններուն հումար, և մեր ձիքերը կ'աւելցնեն: Անոնք կը ձգտին մեր երազները իրականութիւններու վերածել: Բնութիւնը մեծ վաճառկան մընէ, որուն ձեռքը մեզի կ'երկարէ ամէն ինչ զոր կը պահանջինք, պայմանաւ որ վճարումը չմասնանք: Մեր մտածումները նման են այն արմատներուն որոնք կը արածուին կուտակուած ոյժերու երկրային սվկանին մէջ՝ ամէն ուզութեամբ: Պտուզը պատրաստ է ծառ

ուն քազուելու նախ քան ձիւնին հասնիլը: Իրենց գտնաբարկութեամբ և իրենց ձամբաւուն վրայ հանդիպած զիւրութիւններով լաւագոյնս նպատաւորուած անձերը, ցեղերու հսկաները նոյնիսկ երբ զերեզմանի փոսին առջեւ հասնին, կը զգան թէ ատկատին կազմուելիք բողբոջներ են, և թէ չեն քած այն չափավ որքան ունեն:

Բայց միշտ այսպէս պիտի չըլլայ: Եատ մը հանգիտութիւններ կը ցուցնեն թէ մարզկային կեանքը առիթ պիտի ունենայ հասնելու իր հասունութեան, պիտի կրնայ տալ իր ամբողջական պտուզը, և առանց խոչընդոտի պիտի կրնայ ամբողջապէս ինքնինքը զարգացնել: Եթէ հաւատարիմ ենք մեր ներքին տեսլութիւններ, պիտի զայ որ մը երբ մեր փափաքները պիտի փթթին, երբ մեր փառասիրութիւնները պիտի զինացուին, երբ մեր խէլալը պիտի հասունայ, վանդպի այս ամէնը կը կազմեն ծաղիկի բողբոջին պարփակութ թերթիկները, այն ծաղիկը որ ու կամ կանուխ պիտի բացուի ու պիտի ատրածէ իրբուրմունքը յայնելով իր գեղեցկութիւնը, առանց թառմելու, և առանց երբեք արգիլուելու իր աճումին մէջ:

Մեր բնազգական մզումները զէպի այն պարը ուր ամբողջ մեր կարողութիւնները պիտի կարենան զարգանալ առանց արզելքի, մեր ներքին բողոքը ընդդէմ փացման որ կը յայտնուի նախ քան որ մենք կատարեալ հասունութեան հասած ըլլանք, այս ամէնը կ'ապացուցանեն թէ կայ իրականութիւն մը համապատասխան մեր որբատերու ներշնչութերուն և փափաքներուն, իրականութիւն մը՝ որ չէ նկարագրուած դեռ ոչ մէկ գրքի մէջ:

Մենք կը անսնենք թէ ամէն բնականոն էակի մէջ կան պէտք եղածները, անոնց մոլցնելու համար կատարեալ այր մը կամ կին մը:

Եթէ կարենայինք յարատեօրէն մեր առջեւ ունենալ կատարեալ օրինակը մեր խէլալին, այնպէս մը որ անիկա դառնար մեր մտքի սովորական կեցուածքը, (կամ աղջուութիւնը), այն ատեն շատով մեր կեանքըն մէջ պիտի արտազրուէր այդ օրինակը և մենք պիտի գառնայինք մարդկային կատարեալ արարածներ:

Մեր երկնային Հօր պէս կատարեալ ըլլալու աստուածային կանոնը մարդուն չէ ըսուած զայն խարելու համար:

## ՔԱՆԱՍՏԱԼԱՑԱԿԱՆ

### ԱՐԵԱՆ ԶԱՅՆԸ

\*

Արրանամ նրստած էր վըրանին դէմ,  
Տըրտմութեան մէջ մնձ.  
Արեւն ճաւաքած շղարշներն ուսկի,  
Խոր ճամբաներէն ու ծըմակներէն,  
Կը բայէր արազ իր պալատն անյայտ:  
Ու պահն էր խազաղ,  
Գարնան հովերէն մեղմ խընկաւէտուած:

Քերրոնի հըզօր, բայց թըշուառ իշխանն,  
Գառնուկի ներմակ գըզաթին նըստած  
Կը նայէր արբառում:  
Մառերու սիրտէն, հողէն, լեռներէն,  
Մըսուք մ'անսովոր,  
Ասեղ առ ասեղ  
Իր միսերուն մէջ, եւ հոգիին խոր՝  
Կը փորէր բաւիզն խուլ ըղծանքներու:  
Հազիւ զիտէր թէ գարնան մէջ էր ինք,  
Երբ ոզին անյայտ խորունկ ոյժերու  
Կը բանայ ակեր:

Վաթսուն տարի էր որ կ'ըսպասէր ան  
Խոստացուած մանկան:

Վըրանի մուտքին,  
Նըստած էր մինակ,  
Քերրոնի հըզօր, բայց թըշուառ արբան:  
Իր հոգիին մէջ, վերջալոյս մ'ինչպէս,  
Կարօտը անհուն ուշացող մանկան  
Կ'ուռէր, կը մեծնար:

Վաթսուն տարիներ՝ եկան ու անցան,  
Հընչեցնելով միշտ  
Զանգակը յոյսին արծաթաղօղանչ:  
Սրբազն օրեր, յաւերժ նեռացած,  
Որոնց մէջ յանախ կը խօսէր Աստուած:  
Ոչինչ կը մընար.  
Ինք մահուան դիմաց,  
Աւազանատ մ'էր հովերէն քըշուող,  
Ոցնչութեան մնձ զառիթափէն վար:

Վաթսուն տարիներ, թափառեր էր ան,  
Աշխարհէ աշխարհ,  
Կըրելով իր մէջ երազն իր ցեղին,

Եւ ձայնը արեան որ զըրպէժի պէս  
Կը յորդէք ահա,  
Լեռներէն անդին իջնող արեւուն  
Իբրև արծագանգ:  
Այժմ ծերացած ու անմըլխիթար,  
Մայր երկրի կանչին հասակն իր հակած:

Ծառն իր ծաղիկով,  
Թըլչունն իր ծագով,  
Կը նային կեանքին:  
Ի՞նչ էք իր մեղքը ողորմած Աստուած,  
Որ այսպէս ունայն, ամուլ կը մընար:  
Խոնարհ էք եղած, մանկան մը նըման,  
Ինըսուն տարի.  
Հոգին յարդարած Աստուծոյ փառքին,  
Սնոր մեծ ու խտին,  
Ու ճամբաներուն՝ որոնց վըրայէն,  
Սլիք առ ալիք պիտի թաւալէք  
Սերունդն իր արեան,  
Համրանքներովը ծովի աւազին,  
Երկնի աստղերուն:

Այժմ մահուան դուռ, ան կը դողդըլար,  
Ինչպէս է տըրուած երբեմըն դողալ  
Ծեր կաղնիներուն:

Ափերով ծածկեց դէմքն իր մագաղաթ,  
Քերընի հըզօր, բայց թըշուառ արքան  
Կուլար բարձրածայն:

\* \* \*

Երկք տարի վերջ,  
Նոյն վըրանին դէմ Արքանամ նըստած,  
Կը դիտէք խալը սեւաչուի մանկան:

Հազարէն ծընած Խմային էք ան:

Չունէք խըղնի խայթ,  
Իրեն այսպէս էք կամեցեր Սառան.  
Կամքը Աստուծոյ;  
Ութսուն տարի վերջ իր հոգին նորէն  
Ճերմակ կը մընար:

Չունէք խըղնի խայթ,  
Սրեւին ներքեւ ապագային դէմ,  
Սրիւնէն բըխած ծիլն էք անիկա,  
Որմէ բացուէին պիտ' հովիտ հովիտ,  
Սնտառ առ անտառ,  
Ժառանգորդները մեծ Խմայէլին:  
Ու անոր հոգին երկնի չափ մեծցած,  
Կըլլար տաղաւարը սպագային:

Երկու քայլ անդին,

Կ'արտասուէր Սառան,  
Անգօր ու նախանձ:

Բայց արդար է Տէր,  
Կանուխ անազան,  
Բարութեամբ իթեն նայող աչքերուն  
Կը բանայ իր դուռ:

Սառայի հոգին տարիներուն ճետ,  
Տիրոջ խոստումի բոցին մէջ ըզգասու,  
Ապազայի մեծ հըրաշըին Կ'երթար:

Բայց արդար է Տէր,  
Կանուխ անազան,  
Կը բանայ իր դուռ:  
Օր մըն ալ յանկալոց  
Ամուլ Սառայի մէջ կը մարմնանար  
Իր երազը կոյս,  
Զահի մը նըման որ զեռ չը յանգած  
Կ'արծակէ բոցն իր,  
Սառան մայր կ'ըլլար:

\* \* \*

Վըրանին դիմաց,  
Մամբրէի հըսկայ կաղնիի շուքին,  
Կը խաղային զոյգ մ'աղուոր մանուկներ:  
Մըրահամ նըստած էր վըրանին դէմ,  
Կը դիտէր զանոնք.

Եւ իր ծեր հոգին  
Խայտանքին մէջն այդ զըւարթ միսերուն  
Ինքզինք կը մոռնար:  
Դասնզի ոչ ծով, ոչ երկինք ու լեռ  
Զեն շարժեր այնքան սիրտը զառամած,  
Որքան կոհակներն մեր արիններուն  
Հազած այսակէս ծեւ:

Ճերմակ՝ դէմքն անոր,  
Զիւներուն ներքեւ ու զանուն զոյլ  
Զոյգ այս սէրերու տեսարանին մէջ,  
Գերազոյն, անմեռ,  
Կը վարծատըրուին,  
Անթագ խորսակուած տարիներ բոլոր,  
Տըխուր անցեամին:  
Ժամանակն ու մահ, ներկան, ապառնին,  
Շուքեր էին լոկ այս մեծ երազին  
Կըտաւը հիւսող:

Մըրահամ նըստած իր վըրանին դէմ  
Անոյշ կը ժըպաէր.  
Կաղնիի շուքին, երկու մանուկներ  
Կը խաղային դեռ:

Երբ Սառան տըժգոյն,  
Մօտեցաւ իրեն,  
Իր նայուածքին մէջ կ'այրէր, կը ծըլսար  
Հընոց մը նախանձ,  
Կը գողաք մարմինն:

Պէտք է որ մեկնին Խսմայիլ, Հազար:  
Աբրահամ տըխուր նայեցաւ մանկան,  
Որ դեռ կը խաղաք:  
Յաջորդ առաւօտ,  
Ուղտերու վըրայ  
Խսմայիլ, Հազար,  
Անըստոյգ բախտին յանձնըւած այսպէս՝  
Կ'երթային հեռու, հեռու անապատ:  
Այսպէս են ուզեր այս մեր աշխարհի  
Կիները բոլոր,  
Ամէն անգամ որ  
Արեան ծայներուն ականջ են լարեր:  
Անհուն է մայրը, ու չի բաշխըւիր:

## ԵԳԻՒՅՈՒՐԻ

## ՆԱՅԻ ԱՆՈՆՑ, ԽԵՂՃ ՀՈԳԻՍ...

Նայէ անոնց, խեղճ հոգիս, չը մօտեցան ալ քեզի:  
Այսուհետեւ որ լրոիկ, թըշուառութեանդ ուսերուն  
Նետեցիր թեւդ, ու անզուսազ զայն զըրկեցի՞ր..., ես լացի:  
— Այն իղձերուդ՝ շատո՞նց ծեր, մութ սէրերուդ սարսըրուն...:

Դուն մընացիր քեզի հետ, աղքատութեամբըդ հեռուն:  
Ասոր համար ալ խեղճուկ, ամէն զիշեր, ո՛ւշ՝ անքուն,  
Պըտըտեցար միս մինակ, ճամբուն վըրայ քեզի բաւ,  
Որուն քովիկ՝ մերթ բըռնող, սեղմ խուցէն լոյս մը խոնաւ...:

... Ալ քեզ շատո՞նց են զըտած խոժոռ, ըստուեր մէջդ ամբողջ,  
Պա՞ղ ալ, փախչող ու տըխուր, դուն քեզ համար վատառողջ...,  
Եհտոյ, հեղնուտ՝ ծիծաղներ, որո՞շ, որ «Մեծ է անի...»:

Բայց զիշերուան թաթին տակ, նոճիներու շունչին մօտ,  
Կինսա՞ս, հո՛գիս, ու նայիս, վիշտ աչքերով քու աղօտ՝  
Զըղջիկ մը մերթ, լոյսին մէջ, կը լուայ փորն ու կ'անցնի...:

## ՊԵՂԵՍՏԻՆԱԳՐԱԿԱՆ

### ԱՐԱԲԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՄԱՐԻԱՆ

Ա. — Քաղաքի եւ նորագոյն պեղմանները. — Բ. — Խարբական խողաբարությունը Աբասիք ժամանակը. — Գ. — Ախարի պատմությունը. — Դ. — Ախարի ժամանակաւուն Խարայի խեցեգիրենը ու երբայլամի գիրերը. —

Ե. — Աշխանագրական ծանօթություններ. —

Զ. — Արբայրական վերակացուներ:

### Ա. ՔԱՂԱՔԸ ԵՒ ՆՈՐԱԳՈՅՆ ՊԵՂԱՌԱՄԱՆԱԿԱՆ

Խարայէլի քաղաքակրթութեան պատմութեան մէջ նշանաւոր տեղ ունեցող Ասմարիա, մայրաքաղաքն էր նոյն ինքն Խարայէլի թագաւորութեան և կուսակալունիոս քաղաքը՝ համանուն նահանգին: Թամբի թագաւորի յաջորդ Ամրի տուաւոյս անունը քաղաքին՝ զոր շինեց Սեմերան երբան վրայ, զայն երկու տաղանդ արծաթի գնենէլ յետոյ սեպհականատէր Ասմերէն: Ներկայիս Սեպաստյէ կը կոչուի Խարայէլի երբեմնի այս ծաղկեալ մայրաքաղաքը, զոր Հերովդէս արքայ անուանեց, հաճոյ թուելու համար Օգոստոս կայսեր՝ որուն ընծայ տրուած էր քաղաքը: Ազրապոն, Միջնա, Յուլիոս Ափրիկանոս, Ռոզինէս, Եւսեբիոս և Ս. Յերոնիմոս յաջորդաբար կը յիշեն Ամարիան կամ Սեպաստյէն:

Քաղաքը, ի հնումն, շնուռած էր զըստիք և արգաւանդ գաշտավայրի մը մէջ, ուղղուած եփրեմի ընդարձակ լունազօտին միջն, գրեթէ արբորջովին ծածկուած արդիներով և ալլազան պտղատու ծառերով: Արեմտեան կողմէն քաղաքը կը բացուէր զաշտավայրին ու Միջերկրական ծովան վրայ ու պաշտպանուած էր լայնանիստ պարիսպներով, որոնց վրայ կը ըրջէր թագաւորը: Եւ իրաւամբ, Ամարիա Խարայէլի թագաւորութեան փառայեղ պատկն էր, որով կրնացին հպարտանաւ Հրեայք: Ըստ Ամովս մարգարէի (Զ. 1), Խարայէլացիք Ամարիան կը նկատէին սզօրաւորս քան զամենայն քաղաքուն: Աստաւած Եսայիայ բերնով (թ. 9) կը սպառնայ կործանել Աս-

մարիան և կոտորել Խսրայէլը: «Պարիսպին» աղիւսները ինկան, բայց զայն ի նորոյ պիտի շնորհ կոփածոյ քարերով ժողովրդային պատասխանէն յայտնի կ'ըլլայ որ Քանանու հնագոյն քաղաքներուն մեծ մասը, մէջը ըլլալով Սամարիան, աղիւսէ շնուռած էր: Ետ հաւանական է որ փօխարերական իմաստով ալ գործածուած են վերի տաղերը, ուղելով ակնարկել ժողովուրդի բնակարաններուն: Եւ արգարև մայրաքաղաքին հարուստ տանուաէրերուն բնակարանները շնուռած էին բոլորովին տաշուած քարերէ և իրենց տնական զարդարանքներուն մէջ շոալյօրէն առատ էր փղոսկրը (Ամսվ՝ Դ. 15): Հարուստները թէ՛ ամարանոց ապարանքներ ունէին և թէ ձմեռուան յատուկ բնակարաններ:

Հերովդէսի կողմէ ի նորոյ կառուցուած Ասմարիան, որ ինչպէս տեսանք Սեպաստյէ անունը առաւ, յունական ճաշակով շնուռած էր, չըջապատուած քսան «ստադ» կամ 3700 մէթր երկարութեամբ շատ զեղեցիկ պարիսպով մը, որ իր մէջ կը պարփակէր լերան գրեթէ ամբողջ վերնամասը: Քաղաքին կեդրոննը կը բարձրանար Օգոստոս կեսարի տաճարը: Սիւնազարդ լայն պողոտայ մը, Բալմիրի ոճով, կ'երկարէր քաղաքին մէկ ծայրէն միւսը, արեկլքէն արեմուտք ուղղութեամբ, անցնելով ակրոբալին հարաւային կողմէն: Այս սիւներէն միայն երեսուն հատը կանգուն կը մնան, մնացեալները զետին տապալած են ու մասմբ հողին մէջ թաղուած: Սիւնազարդ պողոտան արեմտեան կողմէն կը յանգէր գոյէ մը մէծաղիր աշտարակներով դրան մը: աշտարակները բոլորչի էին և հոյակապ տեսքով: Ա՛չ շատ հոռուն, կը տեսնուին աւերակները բարձր սիւներով ուրիշ շէնքի մը, որ կը թուի դարձեալ տաճարը մը եղած ըլլալ, Բ. կամ Գ. զարուն կառուցուած հոռմէական զաղութէն: Տաճարին սիւներէն տասնըհինգը տակաւին կանգուն կը մնան մէկ մէթր բարձր իրենց կոնաձեւ խարիսխներուն վրայ: Տաճարին արեկեան կողմը յետազային, թերես զար մը յետոյ, աւելցուած կողակը, ինչպէս նաև հոնկէ գտնուած կոստանդիանոս կայսեր յատուկ դրամները, կը յայտնեն որ ան Գ. զարուն վերածուած էր քրիտանէական պաղեմքայի մը: Քաղաքին հիւսիսային

կողմը, բայց պարիսպէն դուրս և բըլութին սասրութը, կ'երեւալ վիմափոր քեդարձակ սրտն մը, որ կը թուրե եղած ըլլալ թատրոնին նախկին տեղը, որուն հողէն դուրս ցցուած սիւները կ'երեւան ցարդ։ Զանագան շրջաններուն նորոգութիւն տեսած ջրուղիներ (ազնէւս) քաղաք կը բերէին շրջակայ լեռներու ակնաղբիւրներուն ջուրերը, հսկեցնելով պտորոտը քլուրին՝ ուրկէ անտարակոյս մաս մը կը լեցուէք պալատան գաւկիթին ա՛յն աւազանին մէջ՝ ուր Աքաարի ծառաները իր արիւնոտ կառ քը լուացին։ Քաղաքին արեւելեան ծայրը եւ ո՛չ հեռու դէպի հօն երկարող ճամբէն։ Դ. դարուն դեռ ցոյց կուտային Արգիտափ եւ եղիսէ մարգարէին գերեզմանները՝ ուր Ա. Յովհաննէս Մկրտչի աշակերտները Մաքերնդէն իր կտրուած զլուխը բերած էին։ Հերովէսի կողմէ զրեթէ հիմնովին վերակառուցուած և Հասմայեցիներէն տիպար ստանի մը ձեւը առած երեմնի այս մայրաքաղաքն էր որ կրցաւ դիմադրել զօրեղագէս կազմակերպուած բանակներուն, իր անառիկ գիրքին չնորհիւ։ Արդարե, հին Սամարիան կառուցուած էր արգաւանդ ու մշտագալար բլուրներու շրջանակի մը կերրոնը՝ ուրկէ անդին, լայն դաշտավայրի մը վրայէն ու դէպի արեւուտք, կ'երկարէր Միջերկրական ծովը։ Հօս տեղն է ըսելու որ քաղաքին ու զլխաւորաբար լերան՝ ուրուն վրայ շինուած էր քաղաքը՝ Սեմերոն կոչուիլը պարզ պատահականութիւն մը չէր։ Երբայերէն՝ նոմելոն, ասորերէն՝ Սամերինա և յունարէն՝ Սամարիա կը նշանակին «պահականոց, դիտարան»։ Ասիկա կարծիքն է Ռւնանի, զոր իրմէ վերջ ուրիշներ ալ ընդունեցան։ Ու Ամրի թագաւոր ասկէ աւելի լաւ դիրք մը չէր կրնար ընտրել իրեն իրը մայրաքաղաք, դիրք մը՝ որ շուտով պիտի ստանար ուազմազիտական կարեւութիւն, դիւրաւ դիմադրելու համար լաւագէս կազմակերպուած բանակներու և Եւ արդարե, երկրի բովանդակ շրջապատին մէջ Սամարիան էր որ դիմադրեց Դիլադպիլէրսի (733-732 թ. ա.), արշաւանքին, ու Սարկոն երեք տարի տեսող ջանքերէ վերջ հալիւ կարողացաւ գրաւել զայն (722 թ. ա.), Քաղաքին բարձր և ամրացեալ դիրքին կարեւութիւնը ա՛յն ատեն յայտնի եղաւ երբ Ասորեստանի Պէն-Հա-

տատ Բ.ի սպաներն ու ծառաները ըսին իրեն։ «Աստուած լերանց է Աստուածն իսրայէլի, և ո՛չ Աստուած դաշտաց» (Վ. Թագաւորութեանց՝ ի. 23), ու ա՛յս էր պատճառը՝ որ Խորայէլացիք յաղթեցին Սոսրեստանցիներուն։ «Եթէ վա՛րը, բաց դաշտին մէջ կոռուինք, կը շարունակին թագաւորին սպաները, անպայման պիտի յաղթինք իրենց» (ա՛նդ)։

Սամարիա այնպիսի հոյատեսիլ համայնանկար մը կը պարզէ՝ որ զիւրաւ կ'ողեկոչէ, եղական ուժգնութեամբ մը, յաղթական անցեալը իր ախոյեան քրոջ՝ երուսալէմի, իր զիւցազն թագաւորներուն գործունէութիւնն ու հմայքը, զինուորական պահագունդերուն ցասկոտութիւնը և իր մարգարէներուն եռանդը։ Ըսինք որ բլուրին գաղաթէն Միջերկրական ծովը կը տեսնուէր ու պալատին զարատափներէն աւելի կ'ընդգարձակուէր ծովուն տեսողութիւնը։ ասով զիւրաւ կը բացատրուի այն սերտարաբերութիւնը՝ զոր Սամարիա ունէր Տիրոսի հետ, Սողոմոն թագաւոր առետրական գաշինք կնքած էր Հիրամ թագաւորի հետ ու Աքաար զինակցած էր Եղորբահաղի հետ, կնութեան առնելով աշնոր Եղարել աղջիկը։ Մինչև այդ թուականը անծանօթ եղող բարգաւաճ շրջան մը բացուեցաւ Խորայէլի թագաւորութեան համար ու պէտք է հաւատալ որ առանց մասնաւոր վարչածն մը ունեցող Խորայէլի պետութիւնը իրեն համար վերջնականապէս ընտրած էր իր թէ՝ մայրաքաղաքը եւ թէ իր արքայատոհմը։ Ասորեստանցիներուն համար, մինչեւ Սամարիոյ անկումը, Խորայէլի երկիրը մնաց իրը ՄԱրիի երկիրը» և այսպէս ալ մնաց, վասն զի իրենց համար «Մար-հումրի ոն բընակին էր Պէլթ-Հումրիին կամ Խորայէլի երկիրն»։

Աքաարի օրով հիւսիսի թագաւորութեան փառքը չի հաստատուիր միայն Դամասկոսի Սրամէացիներու վրայ իր տարած յաղթութեամբը և ո՛չ ալ մինչև Մովարի լեռները իր տարածած իշխանութեամբը։ այլ առաւելապէս իր ա՛յն քաղաքականութեամբը՝ որով զիւցաւ սերտ համաձայնութիւն մը կնքել Տիրոսի և Ցումրիի թագաւորութեանց հետ։

Սամարիոյ կամ Սերասկիոյ բլուրին վե-

րին մասը մասամբ գտնուեցաւ 1908ին, չնորհիւ Հարվերտի ամերիկեան Համալսարանին կողմէ կատարուած պեղումներուն, G. Schumacherի հսկողութեան տակ, Fisher և Lyon իր օգնականներով։ Պեղումները տեսեցին երկու տարի։ Յայտնի է որ Ասմարիոյ նախկին վայրը բնակուած չէր մինչև այն օրը՝ երբ Ամրի գնեց դայն, հո՞ն փոխադրելու համար իր մայրաքաղաքը։ Ծիչը ըսկով, Ամրին կանխող ժամանակի յատուկ կառեցէն ո՛չ մէկ բեկոր երեան եկաւ պեղումներու ընթացքին։ Մինչեւ ժայռին խորը կատարուած պեղումներէն ինչ որ կարելի եղաւ գտնիլ, բոլորն աւ երկաթի դարու բեկարներ էին։ Ժայռին երեսին վըրայ միայն գտնուեցան նոր քարի դարու բնակութեանց յատուկ հետքեր Կ'արժէ ուրեմն նկատի ունենալ որ գտնուած կաւանօթները բոլորն աւ Ամրին յաջորդող շրջաններուն յատուկ են։ Ժայռին մէջ փորուած էին ահազին թիւով հին ջըրամբարներ (citerne)։ Իսկ ժայռին երեսին վրայ աւ բազմաթիւ ջրանցքներ և կաւառներ բացուած էին, տաշտածե շատ մը խորչերով, որոնք կը թուին ըլլալ զոհագործութեանց կամ պաշտամունքի վայրեր։ Հաւանարար այս միենոյն տեղույն վրայ էր որ, արքայական պալատին մերձակայքը, բարձրացած էր Բահադրի տաճարը։ Աւելի վերջերը, այս շէնքերուն տեղ կառուցուեցան ընդարձակ շէնքեր, ցցուած կամ կոճիկ ու անկիւններու յատուկ խոչըր քարերով, որոնց ստորերկրեայ մասերուն վըրայ Հերովդէս շինեց Օգոստոս Կիոսքի նուիրուած տաճարը։ Տասնըվեց աստիճանով մեծ սանդուղէ մը կ'իջնէին գետնաշարի սրահ մը՝ որուն վրայ է որ կառուցուած էր տաճարը և որուն քարայատակին առջև տապալած կը մնան հսկայ սիւներու չորս խարիսխները, իւրաքանչիւրը 1,25 մէթր տրամագիծով։ Քիչ մը անզին կը տեսնուի տորիական ոճով սիւներու խոյակներէն մին։ Տաճարին արեւմտեան կողմը կը գտնուէր սեղան մը՝ որուն մօտ լատիներէն երկու արձանագրութիւններ երեան եկան, I. O. M. զիրերով՝ որոնցմէ յարտնի կ'ըլլայ որ Աբամազգի նուիրուած էր։ Քիչ մը հեռուն գտնուեցաւ հաշմուած արձան մը՝ որ կը կարծուի Օգոստոս Կիոսքինը եղած ըլլալ Սանգուղին ստորոտը, լայն պատուան-

դանի մը վրայ, կանգնած էր ձիւորի մը արձանը։ Սեղանին մերձակայացը, պատի մացորդին տակէն Schumacher զտաւ էպէտ Յերոբովամի կնիքը։ Ցցուն ուրիշ քարեր կը թուին բեկորները եղած ըլլալ պարիսպի այն լայն պատին՝ որ կ'եզերէր լերան ամբողջ վերին գարատափը։ Տաճարին աւերակներուն տակէն երեան եկան նոյնպէս ամէն դարու յատուկ խիստ բազմաթիւ կաւանօթներ, քարերուն հետ ցիրուցան խառնուած։ Բոլոր այս պեղումներէն ի յայտ եկաւ որ Ասմարիոյ կամ Ահապատիյէյի հազոյն շէնքերը կառուցուած էին Ամրիի օրով, մեծցած ու ընդարձակաւած Աքասարի օրով և վերանորոգուած։ Յերոբովամ Բ. ի թագաւորութեան ժամանակի երեան հանուած որմերու և աշխարակներու քանի մը մասերը կը հաստատին հին ճարտարապետներու վարպետութիւնը և այն խնամքը՝ որով կը կերտէին իրենց վստահուած շէնքերու պատերուն քարերը ցցուն (bossage, սիւրի) ձեռվ կոփուած ու այնպէս գրուած էին, ոճ մը՝ որ գրեթէ անխափան կերպով կը շարունակուի դեռ մինչև մեր օրերը, Առւրիոյ և Պահեստինի մէջ։ Կոճիկ քարերու այս գրութիւնը աւելի կանոնաւորուած ու ընդհանրացած է Աքասարի օրով, այն տարբերութեամբ միայն՝ որ այդ ոճը ո՛չ թէ զարգարանքի մը համար ընդունուած է, այլ աւելի զիւրացնելու համար քարերուն իրարու վրայ գրուիլը, կարելի եղածին չափ խնայողութիւնը ընելու համար գեթ ճակատի պատերուն քար տաշելուն մէջ։

Հայկական ԱՐՏԱԿԱԶՄԱՆ ԱՐՔԵՐԻ ՍԿՈՐՈՒՄՈՒՄ

(Եպիսկոպուս)



## ԼԵԶՈՒԱԳԻՑԱԿԱՆ

ԿԱՄԻՍԵՐԷՆԻ, ԹՐԱԿԵՐԷՆԻ, ՓՌԻՒԳԵՐԷՆԻ  
ՆԻ ԵՒ ՓՈՔՐ-ԱՍԽԱՎԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ  
ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԷՆԻ ՎՐԱՅ<sup>(\*)</sup>

(Հար. Հայուսդ Թիվ էն)

Հաթեան արձանագրութիւնները աւելի յաջողութեամբ և ճիշտ վերլուծելուն նըսպասուցին մի քանի հանգամանքներ՝ այսպէս՝ գտնուեց մի երեքլեզուեան բառարան սումերերէն - աքքաթերէն - հաթերէն, թէև համառօտ. երկրորդ՝ մի մեծ արձանագրութիւն երկու լեզուով, հաթերէն եւ աքքաթերէն, որ պատկանում է հաթերի Հաթթուչիլիշ Ա. թագաւորին (Ն. Բ. 1950 թուերին): Բայց աւելի կարեոր է այն հանգամանքը՝ որ արձանագրութեանց մեծ մասը, համաձայն աքքաթերէն արձանագրութեանց ընդհանուր սովորութեան, գրուած է սումերական գաղափարանշաններով, այնքան որ շատ տաղեր ամբողջապէս աքքաթերէն են: Այս պատճառով ահա շատ տեղ ինքնին կարգացւում և հասկացւում է: Դաղափարագիր դրութեան ձեզ մի վատ կողմունի. նա բաւարարում է պատմաբանին, որովհետեւ նա փնտում է գրուածքի խմասով, բայց անօգուտ է լեզուաբանի համար, որ փնտում է բառի իմաստի հետ նաև ընթերցանութիւնը և նոյն իսկ հնչական նրբութիւնները: Ահա այս է պատճառը, որ թէև նորագիւտ հաթեան արձանագրութիւններ ամբողջապէս թարգմանուեցան, բայց բազմաթիւ հասարակ բառերի ընթերցուածը չիմացուեց. այսպէս 1, 2, 3, 4, 5 . . . թուանշանները, թագաւոր, աստուած, որդի և այլն բառերը: Արանց բուրը պատկերագրով են և ոչ տառերով:

Հաթեան արձանագրութիւնները սոսկ տարեգրութիւններ չեն, այլ ներկայացնում են մի ամբողջ գրականութիւն իր զանազան ձիւզերով. այսպէս ունինք թագաւորական գաւազանագրքեր, օրէնքների ժողովածու, գաշնազքեր, պատմութիւն, նա-

մակներ, բառարան, աղօթքներ, երեք եւ չորս լեզուվ այբբենարան, մի նշանաւոր օրհներգութիւն 3500 տողից: Աւելի կարեւոր է հաթեան քաղաքակրթութեան նըշանաւոր յուշարձաններ, այն է նրանց օրէնսդիրքը, որ հրատարակեց ֆրանսերէն թարգմանութեամբ Հրոդուն (Քող հիմնիթ, Պարիս 1922): Նոյնը գերմաններէն թարգմանութեամբ հրատարակեց Գիմմերը, որից էլ կատարուել և հրատարակուել է ուսուերէն թարգմանութիւնը:

Այս օրինագիրքը՝ որ իր հնութեամբ կարող է համեմատուել միայն Համմուրաբիի օրինագրքի հետ (2100 Ն. Բ.), նրանից 700 տարի աւելի նոր է և գրուած է կամ հաթեան Շուպալիլութեամաշ 1390-1350 թագաւորի օրով կամ նրա որդի Մուրշիլիշ Բ. ի. 1347-1310 և կամ նուազ հաւանաբար Հատտուշիլիշ Գ. թագաւորի ժամանակ 1300-1270: Օրինագրքի մեծ մասը վերաբերում է պատմական գատաստանագրքին և պարունակում է սպանութեան, վիրաւորման, գողութեան, ստրուկ փախցնելու և նման յանցանքների մասին զանազան պատիմներ: Հետաքրքրական է որ գողողութեան պատմիմները առհասարակ տուղանքով են վերջանում. և տուգանքը ապրերեւում է համաձայն գողացուած տարկարակի արժէքի. այսպէս տարբեր է ոչխարի գողութեան պատիմը տաւարի գողութեան պատիմից, և տաւարի գողութեան պատիմն էլ տարբերեւում է համաձայն զողացուած տաւարկարակի արժէքի: Օրէնսգիրքը մի առ մի թւում է այս պատմիմները մանրամասնութեամբ: Բացւում է ուսումնասիրութեան նոր ազրիւր իրաւունքի նախնական պատմութեան համար:

Միւս կարեոր գործերից են.

1. Կոմանալի Պապանիկրի քրիմապետի կաղմած հաթեան ծխարանը, որ բնագրով և թարգմանութեամբ հրատարակեցին Զոմեմեր և Եւելուֆ (Լայպցիկ 1924): Այսեղ գտնում ենք հետաքրքրական տեղեկութիւններ հաթեան կրօնի, աստուածների, զոհաբերութեան, պատգամախօսութեան, ուեւերի եւ տօնական զգեստաւորութեան մասին:

2. Հաթեան թագաւորների և ըրջա-

(\*) Վեցուած՝ մեծանուն նեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» զորէն (Ե. Դլուխ):

կայ պետութեանց թագաւորների միջեւ կնքուած 10 մեծ գաշնագիր՝ աքքաղերէն և սումերերէն լեզուներով, որ բնադրով ու թարգմանութեամբ հրատարակեց Վայուներ (Կայզցիկ 1923) երկու հատոր:

Լեզուաբանական տեսակէտից պարզ ուեց, որ բոլոր արձանագրութիւնները մի լեզուով չեն, այլ գրուած են 8 տարբեր լեզուներով. սումերերէն, աքքաղերէն, կամիսերէն, լուգերէն, բալայերէն, խարբիերէն, հաթերէն և մանդայերէն։ Առաջին երկուոր հաթերի համար օտար, միւնիւրը տեղական լեզուներ են։ Ամենազիւած էր:

1. Կամիսերէն, որով գրուած է արձանագրութեանց մեծագոյն մասը։ Այս աշնանը հնթագրական է. ոմանք կոչում են հաթերէն, ուրիշներ նեսերէն, ուրիշներ կաներէն և կամիսերէն կամ կամիսերէն։ Մենք ընտրեցինք կամիսերէն ձեզ։ Կամիսերը, ինչպէս նրանց լեզուի քերականութիւնը ցոյց տուաւ, հնդեւրոպական ժողովուրդ են։ Նրանք Ն. Բ. երրորդ հազարամեակի վերջում արշաւեցին Փոքր-Ասիա և նուռաճելով տեղական ժողովուրդներին, տէր գարձան նրա կենտրոնական մասին։ Աւելի յետոյ նրանք առաջացան դէպի հարաւ և իրենց տիրապետութեան տակ առին կիլիկեան, Ասորիքը և Միջազգեամբը։ Բարեւական ժամանակագրութեան մէջ միշուած է թէ Բարեւլոնի առաջին հարրուտութեան (2225-1926) վերջին շրջանում հաթերի թագաւորը արշաւեց Ասորեստանի վրայ։ Այս թուականը հիմք է ծառայում ճշտելու կամիսերի նախնական գաղթը։

2. Հարեւեն(\*), հար կամ աւելի ճիշտ խար են կոչում տեղական հին նախարարնիկներ, որոնց լեզուով գտնուած կայ 50 կտոր արձանագրութիւն, շատը կամիսերէն թարգմանութեամբ միասին։ Այս լեզուն միւս բոլորից տարբեր է և ունի նախամասնկային գրութիւն։ Որանից հետեւում է թէ այդ նախարնիկները հնդեւ-

րոպացի չեն։ Միւս անդական ժողովուրդներից են։

3. Մանկայեցի՛ իրանական ժողովուրդ, որ Մարատանից գաղթել է Ն. Բ. երրորդ և երկրորդ հազարամեակին, լատ Ասորեստանեան ժամանակագրութեան։ Արբանց լեզուով դանուած արձանագրութիւնները քիչ են, բայց ցոյց են տալիս իրանական բնոյթը։

4. Խարի կամ հուրբի, որոնք պատկանում են միտանի ցեղին։ Արանց լեզուով գրուած արձանագրութիւնները շատ չեն։ մեծագոյնը վերոյիշեալ 3500 տող անոց օրնենքին է. լեզուն ներկայացնում է միաաներէնի մի բարբառը։

5. Բալա, որոնց լեզուով շատ քիչ բան կայ գրուած։

6. Լուվ, որոնց լեզուով ծանօթ է միայն 700 բառ և երկլեզուեան մի բնագիր լուվերէն-կամիսերէն։ Կամիսերէնին շատ ժօտիկ բարբառ է։

Հնդեւրոպական եկուոր կամիսները տիրելով այս բոլոր ժողովուրդներին և պարտագրելով նրանց կամիսերէնը, միւնոյն ժամանակ մեծագէս ազգուեցին տեղական լեզուներից։ այնպէս որ կամիսերէնը թէ և հիմնական բառերով ու քերականութեամբ հնդեւրոպական է, ինչպէս հայերէնը, բայց հայերէնի պէս ունի իր բառարանում օտար բառերի մի մեծ թիւ։ Կամիսները քաղաքական տեսակէտով ընկան ասորեստանցոց ազգեցութեան տակ և առին նըրանցից բենապրական արուեստը։ Ինչպէս կիսենք բենապրութեան հնարինները եղել են Ասումերները, որոնք Բարեւլոնի նախասմական բնիկներն են։ Ասումերներից բենուապրութիւննը անցաւ եկուոր սեմական ներին։ բայց այդ գրութիւնը այնպէս էր կազմուած, որ առանց սումերական լեզուի գիտութեան, անկարելի էր որ և է բան արձանագրել, ուստի Ասորեստանում եւ Բարեւլոնում միշտ սովորում էին սումերերէնը։ իբրև գիտական կամ ուսումնական լեզու։ Այսպէս եղաւ նաև հաթերի երկրում։ Նմանապէս աքքաղերէնը այն ժամանակաւայ Արեւելքի դիւնական լեզուն էր և միջազգային դաշնագրերը կընքում էին այս լեզուով։ Ահա այս պատ-

(\*) Ամերիկացիք նոր պեղումներ կատարելով բազագեցից ոչ հեռու Ալիշար կոչուած գայրում, զաել են մի անձանօթ լեզու, որ խոսում են Անատոլիի մի զիշում մի քանի ձերունիներ և որ հաթերէնի մնացորդ են կարծում։

ճառով կամիսները ստիպուած էին իրենց արձանագրութեանց մէջ գործածել սումերերէն և աքքաղերէն լեզուները, ինչպէս որ տեղական պահանջներին էլ բաւարարութիւն տալու համար՝ գործ էին ածել մանդայերէն, խարրիերէն, լուզերէն, բալայերէն և հաթերէն լեզուները:

Հաթեան նոր գիտութիւնը կարեոր է ընդհանուր հնդեւրոպական լեզուարանութեան և մասնաւորապէս հայերէնի տեսակէտով։ Նախ՝ ջնջուած է արդէն այն ենթադրութիւնը թէ հաթերը հայեր են. երկրորդ՝ հնդեւրոպացոց հնագոյն լիշտակութիւնը, որ համաձայն ասորեստանցոց Սալմանտասար թագաւորի արձանագրութեան, հասնում էր մինչև 935 թիւը, հիմա շատ աւելի հնանում է. ԺԴ. դարի նորագիւտ մանդայական արձանագրութեանց մէջ արդէն յիշուում են ինդրա, Վարունա և Միտրա հնդիկ աստուածութիւնները. և եթէ հնդեւրոպացի կամիսները Ասորեստանցոց մօտ յիշուած են 1926 թուից առաջ, ուրեմն նրանց գաղթը և Փոքր-Ասիայում հաստատուելը սրանից շատ աւելի հին է. Դրա համար էլ վերուում նշանակեցինք Ն. Թ., երրորդ հազարամետակի վերջում։

Մեզ մնում է խօսել այն մասին թէ ի՞նչ կապ կայ հայերէնի. և նորագիւտ լեզուների, մասնաւորապէս կամիսներէնի միջեւ։

Այն սիրալ կարծիքը թէ հաթերը հայեր են ըստ ենաէնի, և այն ենթագրութիւնները թէ հայերը Փոխւզացոց և Փոքր-Ասիական հնդեւրոպացիներին ցեղակից են, մեզ ըստ պատել էին տալիս խոշոր նմանութիւններ հայերէնի և կամիսներէնի միջեւ։ Խորապէս յուստիսարուած ենք։ Կամիսներէնը նման է հայերէնին այն չափով՝ որ չափով նման է որ և է հնդեւրոպական լեզու։ Եա ո՛չ միայն անձուեկ նմանութիւն չունի հայերէնի հետ, այլ և պատկանելով հնդեւրոպական լեզուների կենաւում խմբին, բաւական հեռանում է հայերէնից։ Մի լեզու՝ որտեղ գտնում ենք ուզ, ուզու-ես, զիզ-դու, ուզած-դուք, նախ-նոր, վաղար-ջուր, կիլիուն-այժմ, դա, դի-դնել, ագ, եղ-ուտել ևն, միայն ընդհանրապէս մերձաւոր է հայերէնին և բնաւ առելի չէ, քան յունարէնը կամ պարսկերէնը։

Ամփափելով այս բոլորը մենք հասնում ենք հետեւեալ եղակացութեան։ — Փոքր

Սախայում բնակւող ժողովուրզների հընազյն խաւը հնդեւրոպացի չէ. աւելի յետոյ եւրոպայից եկել են հնդեւրոպական ցեղերի զանազան ալիքներ, ինչպէս կամիշները, հայերը և փոխւզացիք. հաստատուած չէ թէ այս ցեղերը միւնոյն ճիւղին են պատկանում, թէեւ բոլորն էլ հնդեւրոպացի են։

Ինչ որ էլ լինի, հայերը ապրելով այս զանազան ցեղերի հարեանութեան մէջ, անկարելի է որ կրած չլինին նրանց աղդեցութիւնը թէկուղ փոքր չափով։ Այս աղդեցութիւնը մենք երեան կարող ենք հանել լեզուի միջոցով։ Համաձայն այն մեթոդին որ յիշեցինք նախորդ զիսում, եթէ մենք հայերէն լեզուից դուրս բերենք նախ՝ բոլոր բնիկ բառերը՝ որոնք հայերը ունեին արդէն եւրոպայում եղած միջոցին, և երկրորդ՝ բոլոր այն փոխառեալ բառերը, որոնք հայերը ձեռք բերին Հայստան հասնելուց յետոյ (խալդերէն, ասորերէն, վրացերէն, ասուրերէն, պարսկերէն, յունարէն, լատիներէն ևալին), մասցաւը կը լինի համագումարն այն բոլոր փոխառութեանց, որ հայերը կնքել են փոխւզերէնից, թրակերէնից և բոլոր փոքր-ասիական լեզուներից։ Այս բանը դժբախտաբար կապուած է երեք գժուարութեան հետ։ Նախ՝ որովհետեւ համագումարը պատկանում է բոլորին, ուստի մենք չենք կարող որոշել թէ ո՞ր բառերն են պատկանում փոխւզերէնի, կամ թրակերէնի, կամ կամիշերէնի և կամ միւս Փոքր-Ասիական լեզուներից մէկին կամ միւսին, քանի որ այդ լեզուներից ո՞չ մէկի մասին բաւարար ծանօթութիւն չունինք։ Երկրորդ՝ փոխւզերէն, թրակերէն և կամիշերէն լեզուները լինելով հնդեւրոպական, և որոշ չափով մերձաւոր հայերէնի, վախ կայ որ այդ լեզուներից եղած փոխառութիւնները իրենց հնդեւրոպական գոյնի պատճառով խառնուած լինին բնիկ հայերէն բառերի մէջ։ Որով մի կողմից այդ փոխառութիւնները կը մնան անյայտ և միւս կողմից բնիկ հայերէն կոչւած բառերի մի մասը իրօք բնիկ չի լինիլ։ Երրորդ՝ աւելի մեծ դժբախտութեամբ խալդերէն լեզուն մեզ յայտնի չէ, նոյնիսկ նրա ընդհանուր նկարագիրը մեզ անձանթ է, հետեւարար մեր համագումարը չի կարող ճիշտ լինել և նրա մէջ կը լինին բոլոր Փոքր-Ասիական լեզուների հետ նաև

խալդերէնից փոխառեալ բառերը՝ մերջին ճշատղոյն հաշով՝ եթէ հայերէն լեզուից դժուրս բերենք ծանօթ լեզուներից փոխառեալ և բնիկ հայերէն բառերը, մասցեալլը կը լինի Փոքր-Ասիոյ ոչ - հնդեւրոպական լեզուներից խալդերէն լեզուից փոխառեալ բառերի համագումարը Այս համագումարը բաժանելու և իւրաքանչիւրին իր ճիշտ բաժինը տալու համար մենք առ այժմ միշ ջունինք և գատում ենք հետեւալ ձեռվ,

ա) Այն բառերը՝ որոնց փոխառական համագորն յայտնի է, պատկանում են բընականաբար փոխառական փոխառութեանց շարքին:

բ) Այն բառերը՝ որոնք թէս հնդեւրոպական ձեւ ունին, բայց ճշգիւ չեն համապատասխանում հայերէնի ձայնական օրէնքներին, համարում ենք փոխառերէն կամ ուրիշ որ և է Փոքր-Ասիական հնդեւրոպական լեզուից:

զ) Որովհետեւ հայերը շատ աւելի մեծ շփում ունեցել են խալդերի հետ, որոնք հայերից շատ աւելի բարձր քաղաքականութիւն ունին և որոնց հետ միախառնուելով յետոյ մի ազգութիւն կազմեցին, ուստի և փոխառութեանց մեծ մասը պատկանում են խալդերէնին, հետեւաբար այն բոլոր բառերը՝ որոնք նախորդ երկու պայմաններից դուրս են մնում, համարում ենք խալդերէն:

Այսուեղ պիտի հաւաքինք փոխառական և՛ Փոքր-Ասիական փոխառութեանները, խալդերէնները թողնելով յաջորդ գլուխին:

1. Ասոււած, նոյն է թրակո-փոխառական այն նշանաւոր աստուածութեան հետ, որ յոյն մատենազիւնները լիշում են սաբազիս ձեռվ։ Այս աստուածութեան անունը յատկացուեցաւ յետոյ Բագոսին։ Հայերէնի մէջ գերազոյն աստուածութեան անունն էր, դրա համար էլ յետոյ ընդհանուր իմաստ ստացաւ և քրիստոնէութեան ժամանակ նոյնիսկ հնդեւրոպական դից բառը մոռացութեան ժամանեց։

2. Սայլ, որի հին ձեւը պիտի լինի սատիլ, նոյն է սատիլլա «բոլլք աստուղաց,

Մեծ Արջի համաստեղութիւնը» (Հետիքիսս), սատինի, յդ, սատինայ սայլ, կոռու կառք (մէկ մէկ անգամ զործածուած Հոմերոսի և Անակրէննեան մի հատուածի մէջ)։ Յունարէն ձեւերը Փոքր-Ասիական ծագում ունին և համարում են փոխառական փոխառութիւն։ Մեր բառը համապատասխանում է իր երկու նշանակութիւններովն էլ, ուրովհետեւ յդ, սայլ նշանակում է ոչ միայն սեղան կառքըն, այլ և մեծ և փոքր Արջի համաստեղութիւնները։

3. Փանդիսն, հին հայ վիպատանների նշանաւոր երաժշտական գործիքն է, որ կոչում է նաև բանզիսն կամ բամբիսն։ սա մի տեսակ թելաւոր նուազարան էր, որի կազմութիւնը յայտնի չէ։ Բառիս հետ բոլորպին նոյն են լիւդիարէն պունդուրա, պանդուրին, պանդուրիս սերեք լարով քըրհարո, վրաց. փանչուրի, փանչուրի, թուշ. փանդուր, չեչեն. փանզդուր լարաւոր նըւազարան, օսս. ֆանզդուր երկու լարով կիթառ։ Փոքր-Ասիայից բառը անցել է յոյշներին և տուել է պանդուրա երեքտիեան քնար (յունաց մէջ աւանդութիւն կար միշտ թէ փանզիսը Փոքր-Ասիայից է եկած)։ Յունարէնից ձեւացել են լու պանզդուր և թրք. փանզդուր, որի միջոցով էլ բուլգար, սերբ, ուկրայնական ձերր։

4. Ազարակ, այս բառը շատ նման է հնչում հնի. ազրո օարտ, անդաստան, ազարակ բարին, որի հայերէն ժառանգն է արտ։ Հստ ձեւի ազարակ չի կարող հայերէն լինել, և որովհետեւ նման է նախորդ բառերին, ուստի պէտք է համարել փոխառեալ։ Փոխառութիւնը չի կարող լինել իրանեան լեզուներից՝ իր գ. ձայնի պատճառով։ այլ պատկանում է արևմտեան խմբին։ հետեւաբար պէտք է զնել փոխառականից կամ համարենից, եթէ սակայն սումերական ազար «գաշտ» բառը չէ։

5. Արագիլ նման է յունարէն պելազզոս հոմանիշին, որ համարում է պիտիս՝ սեւ և արգոս՝ սպիտակ բառերից բարզուած։ բայց աւելի լաւ է զնել Փոքր-Ասիական մի լեզուից փոխառութիւն, որից է նաև հայերէնը։

6. Սեխ. Այս բառի հետ նման են հնչում յունարէն սեկիւս, սիկիւս, սիկիւս

«վարունգ, սեխ կամ դգում» , որոնց ծառ զգումը անսատոյց է . հաւանաբար կցում են հալ . տիկը դգում բառին և համարում են թքակո-փոխգական փոխառութիւն . նոյն պէս պէտք է առել նաև հայերէն բառի համար :

7. Կարին . նման է յունարէն կարին , կարինոս բառին , որի ծագումը անյայտ է . պէտք է զնել Փոքր - Սոխական փոխառութիւն հայերէնի հետ :

8. Մինչ . այս բառը համարում է փոխառեալ յունարէն սիւրինզոս բառից , որ ստկայն լիովին չի ծածկում հայ ձեւ . միւս կողմից յոյների մէջ աւանդութիւն կար թէ սրինզը Փոքր - Սոխական կամ փոխգական ծագում ունի : Այս զէպգում ուրիշն աւելի յարմար է հայերէն բառը զնել ոչ թէ յունական , այլ փոխգական փոխառութիւն :

Այս փոխառութիւնները որ նշանակեցինք վերեւում , թուով չափազանց քիչ են , բայց որպակով , այսինքն իրենց կուլտուրական արժանիքով շատ բարձր . — Աստուած բառը բովանդակում է իր մէջ բոլոր կրօնական և գիցարանական աշխարհը . փանդիոն ու սրինզը ներկայացնում են ոչ միայն երաժշտութիւնը , այլ և հին հայոց վիպասանութիւնը , այսինքն անզիր բանահիւսութիւնը . սայլը և ազարակը ոչ միայն ներկայացնում են ամբողջ գիւղական տրնամեսութիւնը , այլ և սայլը նշանակելով Մեծ Արչի համաստեղութիւնը , ներկայացնում է հին հայոց աստղաբաշխական դիտութիւնը : Այս տեսակէտով փոխգական այս փոխառութիւնները մեծ արժէք ունին և ենթադրել են տալիս իրենց յետելից փոխառութիւնների մի ուրիշ շարք : որ սակայն գիտութեան արգի միջոցներով անկարող ենք ձշգել ու որոշել :

Այժմ անցնինք կամիսական փոխառութեանց :

Եթէ կամիսերէնը , ինչպէս տեսանք , հայերէնին անձուկ ցեղակից լեզու չէ , այնու ամենայնիւ վստահ պէտք է լինել որ կարող է բացատրել մեր լեզուի ինչ ինչ մութ կէտերը : Կան անշուշտ փոխառութիւններ , որ հայերէնը կնքել է նրանից կամ նրա յարակից միւս Փոքր - Սոխական լեզուներից : Եեւ հրատարակուած չէ կամիսերէնի և միւս լեզուների լիակատար

բառարանը , բայց կան զանազան բառաշանկեր և Սոուրտէվանտի համեան բառաշանը (Բալտիմոր 1931) , որոնցից օգտաւելով կարելի եղաւ ինձ գտնել հետեւալ համեմատութիւնները :

Ապլա - ապա , հատ - հատանել , նուլով - ուրեմն , խունիկ - խանգարել , պարսիկ - փշրել , դազան - յատակ , վար - վառել , արրիվար - առաւօտ , տեսար - փետուր , շարաւանգի - շարաւանդ :

Որանցից գուրս որ և է վստահելի համեմատութիւն չեմ կարող գտնել նոյն բառացանկերում : Վերոյիշեալ բառերն եւ վերապահութեամբ միայն կարելի է լիշել , որովհետեւ մեծ նմանութիւն չունին հայերէնի հետ : Անարժէք են նաև այն բոլոր համեմատութիւնները , որ զանազան մարդիկ առաջարկեցին վերջերս : Միակ վստահելի բառն է տարաւանզի , որտ համար նըշկատենք , որ կամիսական զ ձայնը նախաւոր Տ - ից ծագած լինելով՝ կամիսական տարաւանզի ձեր զէմ մենք կ'ունենանք աւելի հին տարաւանզի , որ բոլորովին նոյն է հայերէնի հետ :

Ամենից աւելի հայերէնին նման եմ համարում հաթերի Մուրշիլիշ անունը որով կոչուում են մի քանի թագաւորներ : Դամեր Մուշեղն է , որ ոչ մի մեկնութիւն չունի գեւու Մուրշիլիշ ձեր մէջ և վերջաւորութիւնը եղակի ուղղականի կամիսական նշանն է ; որ համապատասխանում է սանսկրիտ , լատին , յոյն ուն , ուս վերջաւորութեանց : Բայտ այսմ պարզ ձեն է Մուրշիլիի . սու պիտի տար հայերէն Մուրշիլ կամ Մուրշեղ և բ ձայնի սովորական անկումով Մուշեղ . հիմտ . քարշել - քաշել , պարշտել - պաշտել և այլն :

Մի այսպիսի հին ու «աղգայն» յատուկ անուան փոխառութիւնը կամիսերէնից , անշուշտ տանձին նշանակութիւն ունի և ենթադրել է տալիս որ նա մինակ չէ և ուրիշ նմաններ էլ պէտք է ունենայ :

ՊՐՈՖ. Հ. Ա.ՋՈՒ.ԵԱՆ



## ԳՐԱԴԱՎՈՅՑ

**ՀԵՂԻՈՒԹՅՈՒՆ:** Ամրող Երիք Տ. Թագու Պատրիարք  
Գուշակեանի. Պատրիարք Մատենացան, Թի. 21:  
Երևան, 1941. Էջ՝ 382. Գին՝ 3 էլիս:

Դուք եան Մատենագալարանի այս 21րդ Մատենաշաբթ, Հենկանիայի, ողբացեալ Թորգոմ Պատրիարքի յետ մահու հրատարակուած էր Երկանիութիւնն է և հաւանաբար վերջինը: Հաւանաբար կ'ըստինք, վասնզի, մանաւանդներկայի տընտեսական պայմաններուն տակ գէթ առ այժմ, յոյս չունինք որ Սեբաստիոյ իր այնքան արդիւնաոր առաջնորդութեանը իբր միակ՝ բայց այնքան արժէքաւոր գրական յիշատակը կազմող — Յուղան Զենափրաց Ս. Կուսի վանինը — կարելի ըլլայ առանձին հատորով հրատարակել: Միւս հոգմէ սակայն, չենք դալրիիր երբեք չերմօրէն խնդրելէ որ հանգուցեալին այդ աշխատութիւնն ալ պատեհ առիթին իր ամբողջական ձևովը գրուի հայ բանաօիրութեան սեղանին վրայ:

Մուտառորապէս 400 մեծ աղիք էջերով, խընամուած տպագրութեամբ պատկերացարդ այս արժէ քաւոր գիրքը առաջին ակնարկով կը կարծուի ըլլալ ուղևորի օրագրական ապաւորութիւններ և տեղեկութիւններ միայն, բայց քանի կը խորանայ ընթերցազը, անոր իւրաքանչիւր էջերուն վրայ կը լուէ իր ազգին ապագային համար նախանձախնդիր ու իր սիրելի Եկեղեցին պահպանութեանը մասին ամէն ժամանակ և ամէն առիթով խորհող ազնիւ հոգիի մը քնարին ձայնը Ու ո'չ ոք կարծես իր խօսքին ու դրիչին ձայնը ա'նքան ուժգին ազապատանքով քնարերգել գիտցաւ վերջին կէս զարու մէր ազգային ու եկեղեցական այնքան ալէկոծ կեանքին մէջ, իրիմանի քնարէն յետոյ, որքան Թորգոն Գուշակիան։ Ու պէտք է ընդունիլ որ Հնդկանայիր միր ազգի հեռաւոր մէկ գաղութին անցեալ վառքերը, Ներկայիս դեռ նշուլոյ կայծերն ու աղուգայի անյուսութիւնը զառնօրէն երգոյ արտամասոյց քնար մըն է որ կը սկսի զայն երդոցին մատներուն մէջ սպեօրախի՝ երբ եկեղեցական՝ իբր Հայրապետական Ներկայացուցիչ, ու ազգային՝ իբր Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան կազմակերպիչ, կրինակ պարտաւորութիւններով ու իր պաշտօնին խոր գիտակցութեամբը, առժամարար կը բաժնուի Ներկասի ափերէն ու 1916 Դեկտեմբեր 4ին նաև կը նատի զէպի Հնդկաստան, մինչեւ հեռաւոր ծափա կղզին, ընդպրած տարածութեան մը վրայ սփառած իր ցեղին զաւակներուն հաղորդակից ընելու իր զգայուն սիրուը, ու այս կրիմակ առաքելու թիւնը ա'յնպիսի ասեն մը՝ երբ Հայ ցեղը, Թուրքիոյ մէջ, անցուցած էր ու կ'անցընէր բնաջնումի ամենէն անաւոր բաժակը, ու եղենանէն աղատած բեկորներ անհնարին թշուառութեամում մէջ, երեանի զաւակներ սկսած մինչեւ Սինայի անապատը, լեցուցած էին։ Ու Հնդկանայիր ուրբէնի իր մէջ կ'ամփոփէ 1916 թիւսուն, և 1918 Մարտ 20, շաբաթ 16 ամիսներու քիչ մը

Stanley ի Աւղակորութիւնները վերակոչող շահեկան համապարհօրդութեան մը ալլազան նկարագրական՝ սեղմուած 35 դրախմաներու մէջ, երթու զարգաց:

Գիրքին ընդարձակ ու կանաչավայր դաշտը կը բացուի գեղեցիկ պարտիզակավ մը՝ ուր այցելու ընթերցողը պահ մը կանց կ'առնէ Յառաջարանի սեղշ դրուած միայն երկու բայց շատ տպաւորիչ էջերով ժանօթանալու համար դրական զաշտին վրայ ժադիկած այլաղան զեղցիութիւններուն։ Մեծ թանգարանի մը սրահները մտնելէ առաջ, կարծեն շատ բնական բերումով, այցելուն պահ մը կանց առանց կ'ուղղէ մուտքին վրայ բացուող դրասներակին մէջ, ո՞ն տեղիկանալու համար օրանիներուն մէջ տեղաւորուած հնացիտական արժէքներուն, տպագրեալ ուղեցոյցներու օգնութեամբ։ Այլ զե՛րն է որ կը կատարէ Թորգոն Սրբազնի այսուբնօրին միւս հրիտակ-ներուն և մանաւանդ զանոնք երկնող մնէ հոգիի մը բարոր թուիչներուն խորացէ ծանօթ գրադեմարդակետը պատյուն և զգածուած տողեցոյցներով ընթերցողին առջն կը պարզէ բուն դիրքին ծալքերը։ Յառաջարանը խմբագրող վարդապետը, զիրքին հեղինակին պէս, կ'ըմբռնէ որ Հըմիլիանայի անունին տակ այս և նման այլ հրատա-րակութեանց խկական արժէքը չի կայանար գիտական ու ուսումնասիրական ընդարձակ ու սպառիչ նկարագրին։ մէջ վնասուել բանահիւսա-կան նպատակ ու հետազոտութիւն, ընդունելով որ անոնցմէ աւելի թանկագին բաներ կան, քան ինչ որ կը պահանջուի նման հատորներէ։

իր ծրագիր կամ կառուցուածք, Հնդկանայիքը, առանց զգալի ըլլալու սակայն, կը բաժնուի երկու մասերու, Առաջին մասը, որ կը զբակէ աւելի քան հարիւրէջ և ինչպէս որ Յառաջարանին մէջ ալ զիտել կը տրուի, ընդարձակ պատմութիւնն է Հնդկանայ գաղութիւնի «ծագման, դարպացման և անտեսական, կրօնական և կրթական երեսներուն վրայ իր ունեցած արդիւնաւորութեանց» և այս տեսակէտով վերջին աստիճան շահնեկան։ Պումպէյին մինչև Սուրաբայա և Մակասար ցրուած այս կարևոր գաղութին արմատը մէկ է որոշ, Նոր Ջուզայի գաղթականութիւնը որ իր առևտրական գետնի վրայ ունեցած քընածին առաւելութիւններովը և ի գին ծանր ու յաճախ տափնելի արկածախնդրութիւններու քաղաքական փաթորիներէ հալածական, կարել է ահաւոր հեռաւորութիւններ, իր ցեղին ու եկեղեցին դարաւոր կաղնիին քանի մը զօրաւու ոյտուցները տանիլ տնկելու համար Հնդկաստանի արեդզիեր ու յութիւնի հոգերուն վրայ։ Այս իսկ տեսակէտով Հնդկանայի հետապնդած նոյանակինոյնն է, զիբքին մէկ ծայրէն միւսը, Կետե իր զրեթէ քայլ առ քայլ և առանց ժամանակադրու կան երկար ընդհատներու, Զուցայեցեց Հընդկաստանի մէջ սկսած ու ա'յնքան պայման արդիւնքներով, ազգային, հոգեւոր ու մշակութային երրեակ զիտիններու վրայ շարունակուած ու արձանացուցած յառաջդիմութիւններուն։ Աստ արդ ուղեգիծին, Հնդկանայիք կը զառնայ ուրեմն Հինգամ նոր Ձուղայի ընդարձակ պատմութեան մէ

թել միայն, որ մեծապէս պիտի նովաստէ երջաւ-  
նիկ օր մը այդ կարեռ ու լման աշխատութիւնը  
ձեռք առնել ուզողին: Ու այդ թանկագին պատ-  
մութիւնը խմբագրող անվարման որ իր տրամա-  
գրութեան տակ պիտի ռանենայ ջաւզայի անցեալ  
կեանքը բաղկացնող Հալէպի: Պատվատի ու լե-  
հացոց պատմութեան գէթ ա՛յն շրջանները՝ ուր  
ջաւզայեցիք փայլեցան ու օր մըն ալ առ յաւէտ  
կարուեցան, իշխանական վառքերու հանելէ  
վերջ: Դէտք է խոստովանիլ օր Հնդկանայի իշմ-  
բագիրը ջուղանց ամբողջական պատմութեան  
ի՞ր ալ նպաստը բերելու գաղափարէն ալ առաջ-  
նորդուած ըլլալ կը թուի, մասնաւրարար զիր-  
քին առաջին հարիւր էշերուն վրայ: Ցատկապէս  
պիտի ուզէի շեշտել այս պարագան: Վասնգի  
զիրքին մնացեալ ստուար մասը տարաբախտա-  
րար մնացած է լոկ օրագրական կալուածի մէջ,  
ու այս հակառակ հնդինակի կամքին որ անկառ-  
կած զիրքին ակնարկուած այս մասն ալ պիտի նո-  
խացնէր ազգագրական ծանօթութիւններով, ան-  
չուշտ յետապային: Երբ պատեհութիւն ունենար:

Դաւրիժեցիի, Դարանաղցիի, Սիմէոն Լեհա-  
ցի և Երեմիա Զէլէպիի ու վերջապէ Տիմոթէոս  
Վրդ: Սափրիչեանի ժամանակադրութիւններէն  
յետոյ, Թորոտ Սրբազնաի Հնդկանայիք մեր զըմ-  
բախտ ցեղին դալթականութեան ցաւազին պատ-  
մութիւնն է ու այս իսկ տեսակէտով մեծապէս  
շահեկան: Նախորդներուն մէջ սակայն, անտա-  
րակոյու ժամանակի բերումով, մեծապէս, զիրքէ  
ամբողջովին: Կը պահսի ուսուումասիրական տա-  
րալը, հակառակ անոր որ Դաւրիժեցիէն շատ  
առաջ իսկ եւրոպացի բազմաթիւ ուղերուներու  
կարգին, հայ, յոյն և ասորի ուղերուներ իշենց  
նոյն ճեկի ժամանակադրութեանց մէջ զիտցած  
էին մոցնել զիտական տարազ մըն ալ, առաւե-  
լարար Կիլիկիան շրջանին:

Թորգոմ Սրբազնա, խորապէս զիտակ բանա-  
սիրական և ազգագրական արծէներուն, Հնդկ-  
կառատանի համար տակաւին նաւ չառած, պատ-  
րաստուած կը թուի ըլլալ բանասիրական ար-  
գիւնքներով հարուստ մեղեգրութիւն մը խմբա-  
գիր ու նոյն քան յայտնի կերեայ որ առ այդ  
կարգացած ու ճեկի տականէ ուղած է հայ  
և ոտար բազմաթիւ աղքիւներ, զօրս մեծապէս  
հոփացուցած ըլլալ կը թուի տեղեւոյն վրայ: Իւ-  
րաքանչիւր հանդիպած բաղաքի մէջ հաւաքած  
ամէն կարգի հայալըշմ արձանագրութիւննե-  
րով և իրազեկներէ բաղած կենդանի վկայու-  
թիւններով: Մեր այս համոզման իրք ապացոյց  
այն՝ որ Հնդկանայիք թառաջաբանին մէջ կ'ակ-  
նարկուի որ Թորգոմ Սրբազնա ամէն աեղ, ինչ-  
պէս օր կը կարգանք գիրքին շատ մը էշերն ալ,  
երկիւլած պաշտումով ու զիտական միտքի վայել  
համբերատառութեամբ, ճնբագրած կամ կանգնած  
է իւրաքանչիւր տապանաքարի: Խաչքարի ու  
այլ յիշատակարանի առջև և խնամով գիրքի ա-  
ռած է զանոնք ու նմանապէս ընդօրինակած  
Հնդկանայ տարար եկեղեցիներու զիտակատանց մէջ  
պահած ու պատմական արծէք ունեցող բոլոր  
արձանագրութիւնները: Ցայտնի է որ Թորգոմ

Սրբազն խղ ճմտօրէն կատարած է այս ծանր ու  
մաշեցնող և սակայն շատ պատուարեր աշխա-  
տութիւնը: Հակառակ ասոր սակայն այս կարեռ  
մատեանին ամբողջական ընթերցումը որքան  
հաճոյքով՝ նոյն քան օգտուելով լրացնելէ յետոյ,  
ո՛չ նուազ զարմանքով զիտեցի որ հանգուցեա-  
լին բանասիրական այս հաւաքումները երբեք  
տեղ ունեցած չեն անոր մէջ, մինչզեր զիրքին  
արծէքը մեծապէս պիտի աւելնար, եթէ զոր օ-  
րինակ իր հանդիպած իւրաքանչիւր քաղաքի  
նկարագրին ու հոն ծաղկած հայ անցեալ ու ներ-  
կայ կեանքի նուրիրած տողերուն անպայմանօրէն  
յաշորզած ըլլար արձանապիր տեղույն վրայ հա-  
ւաքուած բուրոյ յիշատակարաններուն: Կը խոր-  
հիմ որ զիրքին հրատարակութեանը հսկու վար-  
զագետներ չեն փափագած անոր մէջ տեսնել Ա-  
լիշանի Սիստանը կամ Ալայումեանի Հայ կատա-  
խան: Բայց այդ տեսակէտով իսկ Հնդկանայք պիտի  
ներկայանար զրական ու բանասիրական կրկին  
արժէքներով անվօխարինելի մատեան մը: Օ-  
տար նոյն սեռի գրականութեան մէջ, առանց  
յիշելու զեռ ա՛յնքան բազմաթիւներ, Victor  
Langloisի Voyage en Cilicie երկատոր Ալիքրու-  
րինները, զրական ու բանասիրական մեծարծէք ք  
հատորներ են: Լանգլուա հայերէնի ծանօթ ըլլ-  
լալով հանդիքը իրեն ուղեկից հայ վարդապետի  
մը օգնութեանը մի առ մի ընդօրինակել տուած  
և իր զիրքերուն մէջ անցուցած էր մեր Կիլիկ-  
եան Հայաստանի բազմաթիւ յիշատակարաննե-  
րը, երբ նման յօնութիւն մը յանձն առած չէին  
կիլիկեցի հոգեորականներ, ամէն զիրքութիւն  
ունենալով հանգերձ: Եթէ ընդունինք պահ մը  
որ այս ճեկ կը ընար Հնդկանայքի առաւելապէս զը-  
րական ու հայեցալական կերպարանին ստուեր  
բերել, ինչ որ ճիշդ չէ անշուշտ, կարելի էր բո-  
լոր այդ հաւաքումները, առանձին գիտակարգու-  
թիւններով, անցունել զիրքին ի վերջ, իրը Յա-  
ւելուած նոյնիսկ, հոգ չէ թէ այդ ծրագրով զիրքը  
ստանար կրկին ծաւալ ու հետևաբար նիւթական  
կրկին զոնզութիւն: Ու քանի որ ողբացեալ հե-  
ղինակը լիովին կատարած էր զիրքին մէջ ան-  
պարմանօրէն իր տեղը ունենալու կոչուած այդ  
տաժանելի աշխատանքը, արդար էր որ յարգուէր  
իր սկզբնական ծրագիրը: Ես վատահ եմ որ այս  
զիկեցին զիրքը շուտով պիտի սնինայ իր երկ-  
րուղի տպագրութիւնը, մեր առաջազգած ճեկով,  
արգարացնելու համար «նորագոյն զպրութեան  
ու պատմութեան ծառայած ըլլալու» կոչումը:  
Ուշագրութիւնս զրաւեց որ հեղինակը ո՛չ մէկ  
տեղ յիշատակութիւն ըներ իր ուղերութեան  
ընթացքին հայ եկեղեցիներու կամ ազգայնոց  
մօս հանդիպած հայերէն ճեկագիրներուն: Ան-  
պարման որ, հոգ չէ թէ քիչ թիւով, հայերէն ճե-  
ապիկներ գտնուած ըլլան Հնդկահայոց մօս, բո-  
լորն ալ նոր Զուղայի մէջ զրուած ու պանդուիտ  
բարեպաշտներու հետ մինչև ձագա ուղեւորած:  
Դիրքին մնացած մասը, զիրքէ 300 էշե-  
րու մէջ սեղմուած, ուղեկորի զմայլելի օրագրու-  
թիւններ, տպաւորութիւններ՝ քիչ մը ամէն հան-  
դիպուածի յատուկ, ու նաև սեղեկութիւններ

հայ և օսմար ապրումներու չուրջ՝ իր նկրկաց  
ձեին մէջ սակայն, ինձի համար զէթ, շատ ա-  
ւելի շահեկան է, քան գիրքին առաջին մասը:  
Պատճի ի՞նչ է վերջապէ նպատակը այդ երկա-  
րաչանչ ու շատ մը հանգստաւէտ ու համելի պայ-  
մաններու տակ իսկ հաստարուած տաժանելիք ու  
վտանգաւոր ուղեկորութեան մը: Եթէ հայրապե-  
տական հրամանի մը կոմ հրաւէրի մը սիբայ-  
ժար կատարումն է, իրը նուիրակ ու հօփի, եր-  
թալ տեսնելու համար ազգին ցիրուցան բեկոր-  
ները ու այս առթիւ իրը պայմանագրական պար-  
տականութիւնն ու յաճախ իրը զբաննք, օրա-  
գրութեան ձեի տակ պահել ուղերի տպառու-  
թիւններ, այսքանը շատ սահմանափակ աշ-  
խառութիւնն մը պիտի ըլլար, ու թորգոմ Սրբա-  
զանի հոգին ու միտք կրող ու եւ կրօնաւոր պիտի  
չներէք երբեք սահմանափակուի օրագրի մը նեղ  
ու անջիղ պարագիծերուն մէջ: Հնդկահայոց հա-  
մար ալ, նմանապէս, բօլորովին անբարար ու  
աննպատակ պիտի ըլլար լուցաւած մամբ զէննե-  
րով սպասել հնօրինյ նկեցեցոյ մը տաջի, ըն-  
դունելու համար մէկը որ Մայր Աթոռի անունը  
և շիշելափառ հայրենիքի մը հառաչանքը պիտի  
բերէ իր հետ: Աւելի քան երեք զարու աղջա-  
յին, հոգեկոր ու մշակութան են երբեմն այնքան  
ուսի անցեալ մը ապրու Հնդկաստանի հայութիւնը  
վերջապէս պէտք էր խորունկ մտածումի առար-  
կան ընէք էջմիածնի սրբազնան նուիրակը, ու  
ոլրացեալը իր այս հոյակապ երկասիրութեամբ,  
աւաշ վերջինը ըլլալու դատապարտուած իր ոս-  
կեղէն հրիտակներուն մէջ, կուզայ իրապէս ար-  
գարացնել իր վեհաչչուք ու առաքելատիր պաշ-  
տօնը, ոչ միայն ամէն տեղ իր հոգիին կրակը  
վառելով Հնդկահայոց տակաւին հայրենի ու հո-  
գեկոր ամէն զգացումի առջի բարախուն սիրտե-  
րուն մէջ, այլ այդ սիրտերը ուղելով յարալար-  
ժել, որպէսզի հնաւոր օսարութեան մէջ ծալ-  
կող հայրենի այդ անզաստակը չցամքի: շարու-  
նակուած տեսնելու եռանդագ Հնդկահայոց զիրքն  
ու անունը, ազգերու, ցեղիրու, կրօն քնիրու և  
իեղուներու այդ անսահման հնոցին մէջ: Թորգոմ  
Սրբազն, հմուտ իր ցեղի անցեալ պատմու-  
թեան բալը շրջաններուն ու ձանօթ հայ գաղ-  
թականութեան պատութեան, սոսկումով կը  
դիտէր իր հանդիպած բոլոր քաղաքներուն մէջ երբեմնի հոսի ու ազգային զգացումով տողոր-  
ուած Հնդկահայոց ապագային ներկայացնելիք  
վիճակը՝ ծովածով անհետացում, ու բաժնուելէ ա-  
ռաջ անոնց կուտայ հրամեշտի իր ողջոյնը, հալ-  
կաթա մայրաքաղաքին մէջ, ուր զիսաւորաբար  
վիճակը լուղուներու հոծ բաղմութեան առջեւ, կը  
պարզէ Հնդկահայ գաղութի պարզան, զայն չեն-  
թարկելու մտահոգութեամբ լեհահայոց և Հուն-  
գարահայոց երբեմն չէն զալութներու այսօր-  
ուան տխուր վիճակին: նուիրակը կ'ուզէ սրբա-  
րացօրէն խօսիլ, տալով իր գործնական թելա-  
զրութիւններն ու օրտագրաւ պատգամները, ան-  
ընդհատ տասնըլեց ամիսներ զինքը շրջապատող  
ու իր խօսքին ու լրջութեանը հմայքին տակ  
պարող իր աղնիւ ու հաւատացեալ ազգակիցնե-

բուն, Նման այն զարմանալի միջատին՝ որ իր ձու ինքնը թափելէ առաջ, իր չուրջը մեռած ժողովի համար ու որդը կ'ամրաբեէ, թխում էն քիչ շետոյ վերանաս իր մահուամբը մենուալ չզգելու ընազգով իր ձագերը, Թորգոմ Սրբազնան կը կատարէ այդ պարտականութիւնը, նողերը ու բարոյական ըր ոնուանը տալով Հնդկահայոց, որպէսզի իր մելինելէն վերջ, անձնը հոգեսրապէն ու մտաւորապէս չմենափն ու շարունակին գեռ պահել իրենց մանցեան ու կինսունակ զիրքը Պահ մը յուսահատ Հնդկահայոց մօտիկ պարագային ու յափշտակուած անսանց անցնելի փառքերէն, ահազին կօրով կը սպառէ իր հրամանաշխատ այդ բանախուսութեան մէջ, (Եջ 3:3), Հնդկաստանի ովկիանին վրայ համար մը պէս ծփացող հայկական գաղութը ընկլզմէլ ապատիւն նապատակաւ: Պահք պահել, կ'ըսէ, ևայ կրօնն ու Եկեղեցին, հայ ի զուն ու զրականութիւնը, մահաւաւուն խոյ լեզուն, որ իրենց համար զիրթէ մեռած կամ անխօս լեզու մը զարմած է Եներկալին: Խաղաղ ժողով մը վրայ սուբբացող շոգենաւի մը մէջ յանկարութ լըսուած ահափարձի մը պէս, Հայրապետական այցելուն է որ կը Հոչհնչնէ ահազանզը: Բնադրական ուժգին մղումով մը և Եկեղեցի ու զպրոց կը գոչ այցելուն ու նաև աղջային կեանք, ապրեցնելու համար այդ թանկագին գաղաւթը: Աւ իրեք միակ գործնական զարման, կ'առաջարկէ Հնդկահայոց ուրոյն առաջնորդութեան մը կազմակերպութիւնը, շարժեալ այն ողջմին համոզումէն՝ «որ նոր ջուղայի Ալլաջնորդարանը նիւթապէս հանկարելի է որ կարենայ հաննիլ Ալլարիս ժողէն մինչեւ Հնդկաշխին և Մալայանա արշիպելագոսը ըստուած այս հեռաւոր գաղութիւն ապային և նողերը պէտք անցնեած է ահա՛ ու զժքախտարար չէ իրականացած ողբացեալ նուրիսկին այս ողջմիտ ծրագիրը, անս՞ր համար արգեօք՝ որ Հնդկանայտը նոր կը ճարարաքանութիւնը անոր անժխտելի ապացոյցն են: Տագնապատիլցուն այս խօսքերէն ի վեր քառորդ զար անցած է ահա՛ ու զժքախտարար չէ իրականացած ողբացեալ նուրիսկին այս ողջմիտ ծրագիրը, անս՞ր համար արգեօք՝ որ Հնդկանայտը նոր կը ճարարաքանութիւնը անոր նուր կարելի է որ կարանացնել իրը Հնդկահայոց ընդարձակ գաղութիւն հոգուր, ապային ու կրթական վարչութիւնը իրեն սեպահականացնող նոր ջուղան նորքն իսկ չունի առաջնորդ, ու այս աւելի քան առաջ տարիներէ ի վեր Հնդկանայտը ես կը հաւատամ որ շատիրէ առաջ թորգոմ Սրբազնի մարզած եռանդուն վարզապետները պիտի կարգան ու անոր չենքն իսկ առաջնորդ մէջ տեսնեն իրենց ապազայ գրութենէն թեան ընդարձակ հորիզոններ, փրկելու համար այդ պատրական զաղութը վերանաս կորուստի վտանգէն: Խարպին և Մանչուրիա աղ աւելի հեռու են Սուբբարայալէն: Ու յետոյ, այս զիրքը պէտք է որ կարգայ ու իր ընտանիքին մէջ պահէ իրաքանչիւր ընդհանայ, ի հարկին ապահովելով նոյնիսկ զիրքին անդիբերէն թարգմանութիւնը: Այլապէս այս արժէքաւոր մատեանը պիտի մանց ընդ միշտ Սրբազնին յետ մահուաց վերջին հրիտակը և կամ գրական նոր հատորը, զայն խմբագրութեան մինչ միտայն միտահար եղողներուն համար: Հնդկանայտը ունի ասկէ պէտք ունի վերակենդանացման, եթէ տակաւին ուշ չէ սակայն...»:

ԱՐՏՈՒՐ ԶԴԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ  
ԵՐԱՎՈՐԻՄ  
28/5/1941

## ԴԻԷԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԵՅ

ԼԸ

(Զայտ բալղբն է դրկեր Ապօք Սուրբութ վարդապետին խսուրեամբ):

Մանիք, իմ աչաց լոյս որդի Առաքիաս հայրապետ, չի լինի՝ չի լինի այս անարատ կոյս խաղաղութիւն պղծուի. մեծաւրաց մօտ փոքրաւորութիւնն կը ակի մօտեւուրութիւն է, որպէս առակ կայ կ'ասեն՝ կուրպիւր սուլթան աթաշի սուզան արը. ամենն քեան քենէ կու կարծեն Ոյս աւը եկան աղաչելով զայս գրել տուին, որ ես այլ կու խնդրեմ ի քենէ, որ ջանք անես այս բանս զօրանայ, թէ չէ՝ Քրիստոս միածինն վկայ է՝ քեզի համար լաւ չի լինիր, որ այս խաղաղութիւնս այլ և այլ լինի. կարդա քիչ՝ իմացիր շատ: Երկրպազութիւն արա հոգեւորաթբաջայ սուրբ ոսիցն յիսնէ, ու զայս թուզթս իւրն մի՛ ցըներ, քեզի խոստովանանք է: Պէճտէի Ապօք:

ԼԹ

(Ապօք Զելեպի Ա. Պալսէն առ Եղիազար կարողիկոս):

Պէճըմ է Փանարմ սուլթանըմ հազրէթ-լէրընայ մուպարէք խաքիփայի չլրիֆլէրընըն պէն չէքլան վէ ճանի կօնկուլտէն եռվում սուրբքան սօնկրա, Քրիստոս Միածին սուլթանըմա պու խեղճ աղդ իչուն երկան կեանք վէ սիհամթի պէտէն պարզէ. ամէն: Պէճըմ Փազիլէթլի է Փանարմ, Հուտամպօլտա օլան մեծ և պղտիկ տօստընըզ վէ գայրի տօստընըզ պու պէնտէնըզէ կէլըպ երիճան վէ նիեազ կթափլէր պու խուսուս իչուն քի՛ ճէնապը շէրիփընըզա պէն գուլուն տախի խաղաղութիւն էթմէնըզ իչուն պէնտէնէմէ իլան պիր ատամ էթէկընըզէ կօնտուրայիմ. պու գուլունըզ տախի փու գարայամէրամէթ էլլէյէսընըզ պատճառով Յարութիւն Զէլէպի գուլունուզի հուզուրունըզա եռու սուրբէք իչուն իրավիլու պէնտէնըզի տուըր. քո սուրբ աղօթքով, ա՛յ սուլթանըմ, որ սատցգ յերկրպազութիւն անէ. կը խնդրեմք ու խաղաղութեան խոնարհս՝ մի՛ մեզ այլ վասն սիրուն Քրիստոսի. բաւ է: Ուլիսի ե. Պէճտէի Ապօք:

Խ

(Աւագիր Եղիազար կարողիկոսի ի Հայեալ ընդ Մարտիրոս վարդապետի Վ. Քիմիւցոյ) (\*):

Քանզի ըստ աղգեցութեան ճշմարտութեան Հոգւոյն վկայեալ իմաստնոց՝ թէ Առտուած զմահ ոչ արար, այլ նախանձու բանս սարկուին եմուտ մահ յաշխարհ և զտու եւ կամուտ և վասն այնորիկ եկն Որդին Առտուծոյ յայտնութեամբ ըստ առաքելոյն՝ զի լուծցէ զգործու սատանայի. և արզարե եւ լոյծ, քանզի եղեւ միջնորդ և քակեաց զկրծիմն և միաւորեաց զբաժանեալան անձառ սիրովն և եցոյց պատճառ քակման և ապականութեան զբաժանումն առեւելութեան ի բան՝ թէ Տօւն բաժանեալ երկու՝ աւերի և քաղաք երկու բաժանեալ՝ կործանի, որոյ պատճառէ սրբազնան անօթ նորին ընտրութեան առաւելապէս կըտամբելով նախատէ զհրապուրան առարկողին յասեն՝ թէ Զանտոնհմն ընտրեաց աշխարհիս և զարհամարհաւալո, զի վեսն իմն խափանեացէ, Քանզի այս է սոտուզապէս կրկին եղջիւր չարազլուն վիշապին, որով ջանայ որսալ զմարզիկ: թէ հասար ինչ իցէ՝ և զընտրեալան. և ի սոյն փորձ մտին բազումք ի մարդկանէ, որոց և յոդունք խոնարհութեան Ցեառն զինու մարտեալ ընծայեցան ի սէր սիրելոյն: Բայց մեք յետնեալ ի նոցունց գերբնթաց շաւղաց, գտաք պարտեալ ընդզիմամարտէն ի բազում նոււզագս. ապա դարձեալ այցելութեանց ամենահնար ձեռնտուղին ծագեալ նշոյլ ի սիրտ բանականութեան՝ նախադէմ խոնարհութեամբ և զարձիւ սիրելի սրբեկի խմոյ տեառն Մարտիրոս վարդապետի, ապա բնամած սիրով և զթով իմս մեղապարտի՝ Եղիազար կաթողիկոսի, վասն նորազոյն պատուիրանի սիրոյ Ցեառն Յիսուսի և վասն անխայելոյ ի գայթակլութիւն Սրբամեանս սեռի և վասն անեղծ հաստատութեան Սուրբ Աթոռոյն Երուսաղեմի և Սուրբ Էջմիածնի, զիջեալ ընդ սէր որդէկի իմոյ Մարտիրոս վարդապետի՝ ընկաւայ զինդիրն և հաւանեցայ ընդ բանսն, ետու զայս մուրհակ ուխտի հաստատութեան վասն երից իրաց.

(\*) Հնդորինակութեան մէջ ախտազրիս վերնացիրն է. «Զենապիր տիտղոսի ընդ Մարտիրոս վարդապետին որ ի շալապէ»:

Նախ՝ զի որպէս և ի սկզբանէ չունիլ  
կամք և ոչ գոյր ի խօսհուրդս իմ յինքնել  
և պիտիսպս օրհնել և հաստատել ի թիմա  
Առըր կշմիածնի և կամ զարբալոյն մեռունն  
առաքել ումիք առանց խնդրոյ աւրուք,  
որպէս զիր երկուսասան բանից խմոց վկայեն  
ինձ, զնո՞յն սէխատեմ և հաստատեմ վկայու-  
թեամբ Աստուծոյ և ամինայն սրբոց նորա

Երկրորդ՝ զի զեսն իմն բառնալոյ և  
վասն կարեկցութեան սիրոյ զիջնալ առ  
խոնարհութիւն և գարծ որդիկի իմոյ Մար-  
տիրոս վարդապետի ձեռնոտու եղէց ի կցօր-  
դութիւն պարտուց իւրոց և անտրուունջ  
կացից ի ծառայութիւն Առուրք Երուսաղեմի  
մինչև ինքն, անուամբ Սուրբ Երուսաղեմի  
ջանացեալ այսր և անզը՝ կարիցէ բղբձիլ  
և ազատի ի պարտուց իւրոց:

Երբորբ՝ զի վասն առաւել սիրոյ թոյլ  
տուեալ զայս ամու հաւաքեալ զնուիրա-  
կաց Սուըրբ Երուսաղեմի զնուէրսն ի Տանէն  
Յունաց առաքել ի Կոստանդնուպօլիս և ժա-  
մանիլ ի ձեռն Սուըրբ Երուսաղեմի վէքիլ  
Խօճա Սողոմոննին և նորին ձեռօք տալ ի  
պարսս պարտատիրաց :

Այս գիրը ուժատի հաստատութեան եղել  
ի քաղաք Հալլապ, թվին Ածմշ ( = 1667 )  
ի յուղա ամսու ից . ի մէջ Հոգեհանն :

Երուսաղիմայ և Առերք իջմիածնայ կաթու-  
ղիկոսացն, որոց պատճառաւ և ես նուաստ  
ծառայ Քրիստոսի Մարտիրոս վարդապետ  
Դրիմեցի գնացեալ յարքունիսն առի զա-  
ռաշնորդութիւն Սուրբ Երուսաղիմայ թա-  
գաւորական հրամանաւ ի ձեռաց Եղիազար  
կաթուղիկոսին: Իսկ այժմ յաղագոյ խաղա-  
ղութեան և սիրոյ և զառաշինն հաստատե-  
լոյ զարոյն Կառարեկութիւն, յանձնեցի ի  
նա զիմո առաջնորդութիւն որ ի Սուրբ Ե-  
րուսաղէմ, զի երթեալ հոգացէ զամենայն  
գործնառութիւն Արքոյ Աթոռոյն, որպէս  
երէկն և յեռանդն, և ամենայն առ և տուր  
ընդ մուռն և ընդ են իւրով իշխանութեամբ  
եղիցի՝ առանց ուրուք հակառակութեան,  
զի ինձ հաճելի՛ է և հաւանելի՛ Բայց միայն  
էմր ու պէրաթի անունն իմ վերայ մնացէ  
ժամանակ ինչ, որ ես նովին անուամբ գը-  
նացեալ շըջեցայց յաշխարհն յԱրեւելից առ  
ի գտանել հնարս ազատութեան պարտուց  
և վերստին հաստատել զառաշին ուրին ի  
մէջ երկուց աթոռոցն սրբոց, և յետ այ-  
նորիկ եկեալ թէսլիմ արարից առ Եղիազար  
հոգեորատէրն զինչ և իցէ զամենայն առ իս,  
թէ՛ էմր և թէ պէրաթի, թէմէսուկ և հու-  
ճէթ և այլ զինչ և պիտոյացի՝ առանց  
հակառակութեան, կամաւ և յօժարութեամբ  
իմով: Եւ եթէ այնուհետեւ ախորժ թուիցի  
երկոցունց կամաց՝ եղէց անդ իրբ զմի  
աշակերտացն իւրոց, ապա թէ ոչ զնացից  
ուր և կամիցիմ, սիրով և առանց տրտնջա-  
նաց:

Եւ դարձեալ փակեցից զսա դաշնական  
վճռաւ և երդմամբք հաստատնովք, զի մի  
երեւեցի խարէութիւն իմն և կեղծ ի բանս,  
զի եթէ վրիպեցեմ մի բան կամ այլ տեսլի  
յաստցելոց աստի, ընդ մատնչին Յուգայի  
և ընդ խաչահանուացն զատիցիմ ի Քրիս-  
տոսէ Աստուծոյ մերոյ օքնելոյն յաւիս-  
եանս:

Գրեցաւ զիրս դաշնական ի թվականիս  
մերոյ ՌՃՁՂ (= 1667) և յուլիս ի իդ. ի  
մայրաքաղաքս Բնիքիայ, որ է Հայոց, ի  
մէջ Սուրբ Երսուագիմայ Հոգետանն ։

ՀՐԱՄԱՆԻՑ Ա. Ե. Ե.

(\*) Ընդորինակութեան մէջ ոխտազրիս վերնագիրն է. «Գիր սիրոյ եւ ծեռազիր ոխտափի այս Մարտիրոս մարտապահէնն է»:

ՈՒՂՂԵԼԻՔ.— Սիսնի նախընքաց 3-4 միացեան համարին մէջ երես 84ա. սոյ 19' են Կիւղի կադալ, Եղիշւղի։ Երես 84բ. սոյ 3' թէ զով կադալ թէզով։

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԻՆ

Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք Ե Խ Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

\* 27 Ապրիլ նոր կիրակի (Կրիստոնէիլ), — Ա. Փրկչի վահուց մէջ, սովորութեան համաձայն, Ա. Պատարաց մատոյց խոստովանահայր Հոգ. Տ. Մուշեղ Վրդ. Հայրապետեան, եւ քարոզեց Տ. Շաւարչը Վրդ. «Որք ի Քրիստոս ննջեցին, հարեան արգեսք բնարանով, ներկայացուց մաքը իբրև ներկինքի վրայ բացուած պատուհան մը» անոնց համար մանաւանդ որսնք զիտեն իրենց կեանքին մէջ ապրիլ սկզբուն քններուն համար զերեզմանն ալ սկ փոս մը ըլլալու տեղ պիտի ըլլայ անդրուզքար մը»:

Ա. Պատարագէն յետոյ եկեղեցական դասը ամբողջ ժողովուրդով, գնաց Արարայի հայ քաջերու յիշատակին կանգնուած կօթողին չուրջ հոգինանգտեան պաշտօն կատարել, և յուշարձանին զիմաց խօսեցաւ Տ. Եղիչէ Վրդ. «Որքի 24ի սկատունին առթիւ, Ապրիլ 24ը, ըստաւ, մեր պատմութեան ձայնն է, մեր գարաւոր սովորումներու վերջին փուլերէն մին, այդու մեր պատմութեան մաս կաղմազ, թշնամին մեր զոյսւթեան սպառնաց, մենք հակառակ մեր ծանր կորուստին անգամ մը ևս ծառացանք մեր զոյսւթեան խարիսխներուն արձակուած վասնզին զէմ և յաջուցեցանք»:

Զի բաւեր միայն 24ի յիշատակին առջեւ միանալ, պէտք է նաև իւրացնել այն ոգին որ մեր մէկ միլիոն մեռեներունը եղաւ և զիրենք մահուան և Աստուծոյ առաջնորդոց»:

\* 3 Մայիս Եր. — Երեկոյեան ժամերգութիւն կատարուեցաւ ի Ա. Յարութիւն մեր վերնատան մէջ, յետ հանդիսաւոր մուտքի և «Հրաշափառայի», որուն նախագահեց Գրե. Տ. Արտաւազզ Արքեպոս.:

\* 4 Մայիս Կիր. — Աշխարհամատան. առաւտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ա. Յարութիւն մեր վերնատան մէջ, իսկ Ա. Պատարագ մատուցուեցաւ Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ, քարոզեց պատարագի Դեր. Տ. Արտաւազզ Արք. «Անաւասիկ զնեմ վէմ Ծնտիր պատուական . . . ընարանով, Ցոյց տուաւ որ բոլոր նահապետները և մարգարէները սովասեր էին այս օրուան, ուր հաստատուեցաւ Աստուծոյ Աթոռաը Ա. Գերեզմանի վէմին վրայ: Այսօր է որ Աստուծոյ թագաւորութեան անկիւնաքարը զրուեցաւ, և ասոր վրայ կանգնած հաստատութեան հաւատացողները պիտի չզջշան և չամչնան իրենց կեանքին մէջ, ուրանիտն Քրիստոս-թագաւորը բանութեամբ և զօրաբանակներով չէ որ կը բաղմացնէ իր կետեւրզները»:

\* 11 Մայիս Կարմիր Կիրակի. — Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, Քարոզեց Տ. Շաւարչը Վրդ. ցոյց տալով որ այս օրը յատկա-

նըռող բացատրութիւնը՝ Կարմիր Կիրակի, պատկերն է հայուն կեանքին: Հայ ժողովուրզը Կարմիր Կիրակիին մէջ է ապրեր, երբ իր հայրենի դաշտերուն կարմիր անդաստանները կը վայելէր, և երբ ներկայի զժնզակ պայմաններու մէջ անիկա վերապրիլ կ'ուզէ: Մեր ժողովուրզը անմահութեան գերեզմանին յազմանակով շնորհուած կարմիր օրերու երազն է որ կ'ապրի:

\* 18 Մայիս Կիր. — Տօն Երեման Արքոյ Խոսի. Ա. Պատարագ մատուցուեցաւ ի Ա. Յակոբ. քարոզեց Տ. Տիրայր Վրդ. հետևեալ բնարանով. «Եւ զուք յորժամ առնիցէք զամենայն հրամայեալս ձեզ, ասասչիք թէ ձառաքք անդիտանք եմք, արարաք զուք պարտ էաք առնելու, ծաց առաւ Յիսուսի աշակերտներուն տակաւին խակ, միամիտու սկալ ըմբռնութեները Անոր իշխանութեանը և զօրութեանը մասին: Անոնք զես չէին գիտեր թէ ծառայութեան իշխանորդինը, զոնդութիւնը զուրիթիւն է Յիսուսի քարոզակ նոր Աւետարանը: Եւ, տիրոջ ու ձառայի առակով Յիսուս իր անշախննիաց, նոր ըմբռնումն էր որ կը պարզէր կեանքի պարտականութեանցը մասին: Առ այսուուն Խաչի տօնը, պարտականութեան կեանքն է որ կը լուսաւորէ, յիշեցնելու համար մեզ թէ միշտ Գողգոթայէն յատոյ արժանի կրնանք ըլլաւ Համբարձման երանութեան:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

\* 2 Մայիս Աւը. — Ամեն, Ա. Պատրիքարք Հայրը, հետն ունենալով առժամենայ զիւանապետ Հոգ. Տ. Սերովը Վրդ. Այցելեց տեղւոյս իրացեան Ընդհանուր Հիւպատոս Գէյին, ի ճնորհաւութիւն երաքի Վեհ. Ֆէյսալ Բ. Թագաւորի ծննդեան տարեցարձին:

— Նոյն օրը, Ն. Ամենապատուութիւնը՝ հետն ունենալով Հոգ. Տ. Սերովը Վարդապետը, Փոխխարձարար այցելեց տեղւոյս Ռուս Միարանութեան մէծաւորին, ի ճնորհաւութիւն Ա. Զատկի տօնին:

— Նոյն օրը, յետ միջօրէի, Երուսաղէմի կառավարչի օդնական Մը. Մանթուրը այցելեց Ամեն. Ա. Պատրիքարք Հօր:

\* 7 Մայիս Դշ. — Ի զիմաց Ամեն. Ա. Պատրիքարք Հօր, առժամենայ զիւանապետ Հոգ. Տ. Սերովը Վրդ. և Աւագ-Թարգման Հոգ. Տ. Հրազդան Արքայ ներկայ զտնուեցան Կ. Ա. Ա. ի տարեկան հաւաքոյթին:

\* 21 Մայիս Դշ. — Երուսաղէմի Եղիսաբեկան Ընդհանուր Հիւպատոս Պէյը այցելեց Ամեն. Ա. Պատրիքարք Հօր:

\* 26 Մայիս Բշ. — Ն. Ամենապատուութիւնը հետն ունենալով առժամենայ զիւանապետ Հոգ. Տ. Սերովը Վրդ. Վարդապետը Փոխխարձար այցելեց Ամենապատոս Պէյը այցելութիւն տուաւ քաղաքին Եղիսաբեկան Առ Բնդհանուր Հիւպատոս պէյին: